

Լիբանանահայ մամուլի յիսուն տարին^(*)

1921 - 1971 թ. թ.

ԱՐՏԱՇԷՍ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԳԱՂՈՒԹԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ի. դարու սկիզբը հազիւ 50 ընտանիքի շուրջ հայեր կային Պէյրութի մէջ, մեծ մասը 1896 թ.ի կոտորածներէն փախած՝ Լիբանանի ասպնջական երկինքին տակ յարարերարար ազատ օդ չընչելու համար: 1908 թ.ի Սահմանադրութենէն առաջ երբ Արեւմտահայաստանի հայահոծ գաւառները մամուլ չունէին, կարելի չէր ակնկալել որ նմանօրինակ փոքրաթիւ դազութ մը ունենար: 1908 թ.ի Սահմանադրութենէն ետք Պէյրութի զոյգ համալսարանները – Ամերիկեան և Ֆրանսական – իրենց կը քաշեն բաւական թիւով հայ

*) Այս ուսումնասիրութեան համար հիմնական կորիզը կազմած է մեր հաւաքածոն, որմէ օգտուելով կ'ուզեմք տալ լիբանանահայ մամուլի մէկ հպամ-ցիկ ակնարկը:

Այս ակնարկին մէջ շատ յաճախ պարտաւորուած պիտի ըլլամք անդրաբանաւ մեր ժողովուրդին կեանքին, որովհետեւ մամուլը ինք առանձին երեւոյթ չէ, այլ հայելի է, մտնաւանդ մեզի պէս ժողովուրդի մը պարագային, իրեն ծնունդ տուող հաւաքակառուութեան:

Շփոք չստեղծելու համար մտնեմք մը մեր անհրաժեշտ կը ճկատեմք: Երբ սուեալ քերք մը՝ խմբակցութեան մը կամ հատուածի մը օրկանն է, մեր գնահատման ու քննադատութիւնը կատարած ենք քերքին անուանով: Իսկ եթէ անհատական ճախածեռութեամբ լոյս տեսած է, մեր գաղտնիքը կատարած ենք խմբագրին անուանով: (Ա. Տ. Խ.)

ուսանողներ. 1910 թ. էն ետք անոնց թիւը 85 հոգի է (1), եւ հակա-
ռակ ուսանողական եռուն գործունէութեան (Զաւարեան Ուսանո-
ղական Միութիւնը գոյութիւն ունէր արդէն 1905 թ. էն սկսեալ)՝
ո՛չ մէկ հետք հայ մամուլի:

1920-ական թուականներու սկիզբն է որ մեր մամուլին առա-
ջին հունտերը կը ցանուին: Հայ գաղթականներուն այս ավերուն
վրայ հաստատուելը, մանաւանդ որբանոցներու հիմնումը, պա-
րարտ հող կը հայթայթեն մամուլի սրահանջին եւ ստեղծման: Կի-
լիկիոյ պարպումէն (1921 թ. ի Դեկտ.) ետք է որ հայեր հետզհետէ
կու դան Լիբանան եւ 1923 թ. ին արդէն անոնց թիւը կը տրուի
չուրջ 20,000: (2) Հետզհետէ Լիբանան կը փոխադրուին Կիլիկիոյ
եւ Արեւմտահայաստանի Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյցին
հոգատարութիւնը վայելող որբերը եւ 12,000 որբերուն համար Լի-
բանանի զանազան շրջաններուն մէջ (Ճիպէյլ, Անթիլիաս, Սայտա,
Շմլան, Նահր-իպրահիմ) կը բացուին տասնվեց որբանոցներ: Կը
հաստատենք այս իրողութիւնը այն նպատակով, որ այս հաստա-
տութիւններուն մէջ պատասպարուած մեր ծնողազուրկ եւ հայրենա-
զուրկ հայորդիներն էին, որոնք պիտի փորձէին լիբանանահայ
մամուլին առաջին սերմերը ցանել: Արդարեւ՝ որբանոցներու, մա-
նաւանդ Ճիպէյլի Թուշնոց Բոյնին մէջ է որ աշխարհ կու դայ լիբա-
նանահայ մամուլի երախայրիքը - Հոսանք (1922 թ.), որուն կը
յաջորդէ նոյն հաստատութեան Տունը (խմորատիպ, 1922-1924
թթ.), Նահր Իպրահիմի մէջ Նոր Դարը եւ Ճիւնիի մէջ Այգը (ձե-
ռագիր, 1922 թ.):

Հաստատում մը այս առիթով անհրաժեշտ կը համարենք:
Վերոյիշեալ թերթերը, ինչպէս նաեւ անոնց յաջորդող այլ թեր-
թերու անունները - Հոսանք, Տուն, Նոր Դար, Այգ, Խարայի, Փիւ-
նիկ, Նոր Փիւնիկ, Որբաշխարհի Աստղը, Ովասիս - խորհրդանշա-
կան իմաստ մը ունին եւ պատահականութեան արդիւնք չեն: Կը
յայտնարենն ճշակոտոր եղած ժողովուրդի մը ներկայի ընտան
պահանջները - Տուն, Ովասիս, եւ ապագայի վառ յոյսերը, հայ
ժողովուրդի վերապրումը - Այգ, Սարոյի, Փիւնիկ, Նոր Փիւնիկ:

Լիբանանահայ մամուլի սկզբնաւորութեան անդրադառնալէ
ետք, կ'ուզենք հետադայ ընթացքը պարագայական բաժանումնե-

1) Բժ. Նր. Խաթանասեան, «Հ. Յ. Դ. Զաւարեան Ուսանողական Միու-
թիւնը», Ազգակ Բացառիկ՝ Աուիքուած հայ ուսանողաւթեան, 1957, էջ 109:

2) Կարօ Գամբարնեան, Համապատկեր Լիբանանի Հայ Գաղութի, Ազգակ
25-մեակ, 1952, էջ 68:

բու ենթարկել, այն է՝ տասնամեակներու: Տալ իւրաքանչիւր տասնամեակի հիմնական հարցերը, ապա թուել զլիաւոր թերթերը, որոնք լոյս տեսած են նոյն տասնամեակի ընթացքին:

Ա. ՏԱՍՆԱՄԵԱԿ (1921-1930 թթ.)

Այս տասնամեակին մամուլին հիմնական միւթը պիտի կազմէ լիբանանահայ գաղութին կազմակերպման հարցը - կրթական, ազգային եւ կուսակցական գեղեցկութիւններու վրայ: Գաղութին կեանքը զեկափարելու հեռանկարով բուռն պայքար կը մղուի կուսակցութեանց միջեւ - զլիաւորաբար Հ. Յ. Դաշնակցութեան եւ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (Ռամկավար եւ Հայ Համայնավար կուսակցութիւնները տակաւին հեռու են նկատառելի ոյժ մը կազմելէ): Այդ պայքարին բնմը չի հանդիտանար միայն մամուլը, այլ նաեւ փողոցը: Ու կրնանք ըսել որ այդ պայքարին հիմնական հրահրողը ինք՝ մամուլը կ'ըլլայ: Ազգային Գաւառական ժողովի ընտրութիւնները, ատոնց առիթով տեղի ունեցած կռիւները, երբեմն նոյնիսկ տեւորի վացող, օրինակ՝ Վ. Վարդապետեանի եւ Սարգիս Տիրուհիի սպանութիւնները, այս տասնամեակին հիմնական նիւթը կը կազմեն:

Կուսակցական մամուլը իր առաջին քայլերը կ'առնէ: Իրաբու ղէմ պայքարող կուսակցութիւններէն միայն Հ. Յ. Դաշնակցութիւնն է որ ունի իր պաշտօնաթերթը: Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը մինչեւ 1937 թ.ը, համակիրներու կողմէ լոյս ընծայուող թերթերուն - Լիբանան, Ժողովուրդ - խմբագրութիւններուն մէջ իր համախոհներն ու շարքայիները ունի:

Հ. Յ. Դաշնակցութիւնը ո՛չ միայն կը հիմնէ լիբանանահայ կուսակցական մամուլին երախայրիքը, այլ նաեւ ապագիր առաջին թերթը՝ 1924 թ.ի Մարտին: Թերթին խմբագրութիւնը կը ստանձնեն Արշակ Յովհաննէսեան եւ Խոսրով Թիւթիւնճեան, որոնք Փետրուար ամսուան վերջերը Պարսկաստանէն նոր ժամանած էին Փիւնիկ թերթի խմբագրութեան եւ կուսակցական դործիչութեան առաջելութեամբ: Թերթը ապա կը վերամկրտուի նաք Փիւնիկ (այս վերամկրտման հարցը կը մնայ լուծելի) եւ մինչեւ 1927 Փետր. կը շարունակէ լոյս տեսնել: Սկիզբը լոյս տեսած է եռօրեայ (1924-26 թթ.), ապա դարձած՝ երկօրեայ: Իր ձգած նիւթական բացին պատճառով թերթը կը դադրի եւ 1927 թ.ի Մարտի 5-ին՝ Հայկ Պալեան, որպէս կրթական փորձառութիւն ունեցող եւ ձեռներէջ ողիւ տէր, կը ձեռնարկէ լոյս ընծայել Ազգայի եռօրեան, որ ցարկ կը շարունակէ իր գոյութիւնը, մնալով լիբանանահայ մամուլին ամենէն երկարակեանքը:

Ազգայի՝ 1930 թ-ին կը դառնայ երկօրեայ, 1932 թ-ի Մարտի 1-ին՝ օրաթերթ, ցարդ պահելով այդ հանդամանքը: 1970 թ-ի Դեկտ-ի 2-ին կ'ունենայ ծաւալի փոփոխութիւն եւ կը սկսի լոյս տեսնել 8 էջով:

Իր 46 տարուան կեանքի ընթացքին Ազգայի ունեցած է խմբադիրներու փազանդ մը, որոնցմէ կարելի է յիշել Արամ Սահակեանը, Մանուկ Ասլանեանը, Մուշեղ Իշխանը, եւլն: Ներկայիս ղլխաւոր խմբադիրներն են Տիգրան Ոսկունի եւ Պօղոս Մնայեան:

Ժամանակի ընթացքին Ազգայի լոյս ընծայած է որպէս յաւելւածներ կամ առանձին հրատարակութիւններ հինգ թերթեր - Յարգագ (1 թիւ, 1932 թ.), Ազգայի Շարաքօրեայ (1944-1952 թթ.), Ազգայի Մարգակամ (1952-1958 թթ.), Ազգայի Շարաքօրեայ - Դրօշակ (1969 թ-ի Նոյ-էն սկսեալ), 2001 (1970-1971 թթ.):

Մինչեւ 1965 թ. Ազգայի սեփականութիւնն էր տէր եւ տնօրէն Հայկ Պալեանին, սակայն ճանչցուած էր որպէս Դաշնակցութեան բանբերը: Այդ թուականին Լիբանանի Դաշնակցութեան Կեդր. Կոմիտէն զննեց թերթը եւ այսօր ան սեփականութիւնն է վերոյիշեալ Կոմիտէութեան:

Լիբանանահայ երկրորդ թերթը եղած է Լիբանամ (1924-1935 թթ.), որ լոյս տեսած է Փիլիպի-ի հրատարակութեանէն երկու շաբաթ ետք: Հիմնադիրներն են Մանուէլ եւ Ժողէֆ Աճէմեան եղբայրները, որոնք հայ դիրին ոչ-այնքան ծանօթ ըլլալով հանդերձ, նախաձեռնարկ եղած են այս եւօրեային հրատարակութեան: Զանազան շրջաններու որպէս խմբադիր՝ թերթը ունեցած է հետեւեալները՝ Արշակ Գաղանճեան, Ղազար Զարըզ, Ժողէֆ Աճէմեան, Երուանդ Քէշիշեան, Տիոնիս Կեսարեան, Միհրան Ս. Նաճարեան (խմբադրապետ), Տոքթ. Միսակ Տաքէսեան, Յովհաննէս Տէր Յովհաննէսեան, Մեթր Ժան Պշարա (հայ կաթողիկէ, հայերէնի տեղեակ անձ մը), Գրիգոր Պատուհասեան, Մանուշեան Վրդ. (հայ կաթողիկէ), Յարութիւն Խուպօշեան, Փրոֆ. Սամուէլ Թումաճանեան, Միհրան Սէֆէրեան եւ Միհրան Աղազարեան:

Թէեւ լոյս տեսած է որպէս անկախ հայաթերթ, սակայն անուղղակիօրէն դտնուած է Հնչակեան Կուսակցութեան ազդեցութեան տակ: Քանի որ Հնչակեան Կուսակցութիւնը մինչեւ 1937 թ. չէ ունեցած իր օրկանը, Լիբանամ թերթը մասամբ զոցած է այդ բացը:

Որպէս անկախ եւօրեայ, եւ այս պարագային իրապէս անկախ թերթ, 1925 թ-ին կը սկսէր հրատարակուիլ Միքայէլ Շամտանճեանի Հայ Կեամբ-ը: Խմբադիրը գերմանական ուսում եւ խմբազրական փորձառութիւն ունեցող ծանօթ մտաւորական մըն էր:

Արդարեւ Պոլիս լոյս ընծայած էր Ոստան (1911-1912 թթ.) լուրջ պարբերաթերթը, եղեռնէն առաջ (6 թիւ, խմբագրական ընկերակցութեամբ Տիգրան Աէօհիւրեանի)։ Ճաշակած էր աքսորի զրկանքները եւ եղած էր այն սակաւաթիւ բախտաւորներէն, որոնք վերագարձած էին Պոլիս՝ շարունակելու համար իրենց գրչեղբայրներուն կիսատ ձգած մշակութային առաքելութիւնը։ Զինադադարէն ետք սկսած էր վերահրատարակել Ոստանը, այս անգամ որպէս ամսաթերթ՝ աւելի համեստ ծաւալով։ Հաւանաբար Բեմալական Շարժման յաջողութեան պատճառով կը ստիպուի լքել Պոլիսը։ 1925 թ.ին արդէն Պէյրութ է եւ կը ձեռնարկէ Հայ Կեանք-ի հրատարակութեան։ Ինչպէս նախապէս յիշատակեցինք՝ կուսակցական բուռն պայքարի շրջանն է։ Մ. Շամտանճեան, յոյսը դնելով անկախներու վրայ, հակակուսակցական պայքարի մը կը ձեռնարկէ այն քաղաքական դաւանանքով, որ «կուսակցութիւնները անելիք չունին»։ (3) Հակապայքարը, նոր Փիւնիկի կողմէ տարուած, գինաթափման կ'առաջնորդէ Շամտանճեանը եւ իր թերթը 7-8 ամսուան հրատարակութենէ ետք կը դադրի։ Նիւթական անձուկ կացութեան մատնուած՝ Շամտանճեան կը մեռնի 1926 թ.ի Օգոստ.ի 21-ին Ղազիրի իր բնակարանին մէջ՝ սրտի կաթուածի հետեւանքով։

Գրականութեան լրջօրէն մօտենալու առաջին փորձերը կ'արձանագրուին Երուանդ Բէշիշեանի Կրթաւիբաց-ին (1925 թ. Նոյ. - 1927 Հոկտ. թթ.), Միհրան Մ. Նաճարեանի Սահակ-Մեսրոպ-ին (1927-1931, 1933-34 թթ.) եւ Վարդան Գէորգեանի Զահակիբ-ին մէջ (երկարաթաթերթ, 1929 թ.ի Յունուար-Յուլիսի 15)։ Սակայն գաղութը տակաւին պատրաստ չէր մարտելու գրականութիւնը, ո՛չ ալ հրատարակիչները նիւթական զօրեղ միջոցներ ունէին տպագրական ծախսերուն տոկալով՝ հետզհետէ գրական ճաշակ ստեղծելու եւ իրենց գրական ամսագիրներուն ամուր կոռուան մը ապահովելու համար։ Այդ ենթահողը պիտի ստեղծուէր տասնամեակ մը ետք, երբ մէջտեղ պիտի դար գրականութեան հուրով տոչորուող սերունդ մը, որ դիւսաւորաբար մշակութային միութիւններու յենարանը ունենալով՝ պիտի կրնար աւելի երկար գոյատեւող գրական թերթեր լոյս ընծայել։ Վերոյիշեալ երեք թերթերէն Մ. Նաճարեանի Սահակ-Մեսրոպ-ը եթէ յարաբերաբար աւելի երէար գոյատեւած է, ատոր դիւսաւոր պատճառը պէտք է վերագրել խմբագրին հիմնական ասպարէզին՝ ղեղադործութեան, այսինքն՝ նիւթական ամուր կոռուանի մը գոյութեան։

3) Կրթասիրաց (Պէյրութ), Բ. տարի, 1926, ք. 12-18, էջ 191։

Ասպարէշով ղեղադործ Միհրան Ս. Նանարեան, գիրն ու գրականութիւնը «ի տղայ տիոց» սիրած, լոյս ընծայած է Հալէպի մէջ Արբիւր թերթը (1913 թ.ին, 9 թիւ)։ Եղած է Լիբանանի խումբադրապետ եւ Ե. Բէշիշեանի կրթասիրացի խմբագիրներէն։ Հանրային վառ հետաքրքրութիւն ունեցող եւ պայքարող հրապարակագիր մը եղած է։ Հակառակ ցաւալի արկածի մը պատճառով աչքերուն լոյսին կորուստին, ցարդ կը պահէ իր հետաքրքրութիւնը հայ կեանքի հանդէպ։ Առաջին տասնամեակի սակաւաթիւ խմբագիրներէն է, որ կրնայ որպէս վաւերական աղբիւր ներկայանալ լիբանանահայ մամուլին համար։

Բ. ՏԱՍՆԱՄԵԱԿ (1931-1940)

Ազգային մեքենայի հաստատման, կուսակցութեանց գաղափարներու և գրականութեան փթթումի շրջան։

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անհաստատ կայք ունեցող հայրապետը՝ Սահակ Կթղ. Սապայեան ի վերջոյ կը հաստատէ իր Աթոռը Անթիլիասի մէջ եւ 1932 թ.ին լոյս կ'ընծայէ Հասկ պաշտօնաթերթը։ Կը շինուին վեհարանը, դպրեմանքն ու Մայր եկեղեցին, որոնք Կաթողիկոսութեան փայլ մը կու տան։

Հայ քաղաքական կուսակցութիւնները կը զօրանան այս շրջանին եւ զգալով մամուլին զօրութիւնը իրենց դադափարարանութեան տարածման եւ շարքերուն ստուարացման համար, կ'ունենան իրենց ուրոյն օրկանները։ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը կը սկսի լոյս ընծայել Զարթօնքը (1937 թ.ի Սեպտ.ի 26), Հընչակեան Կուսակցութիւնը՝ Արարատը (1937 թ.ի Նոյ.ի 7) եւ հայ համայնավարները՝ Ժողովուրդի Զայնը (1938 թ.ի Փետր.ի 6)։

Այս տասնամեակին հայ ժողովուրդը որպէս լիբանանեան քաղաքացի կ'արժեւորէ իր քաղաքացիական իրաւունքը եւ լիբանանեան խորհրդարանին կ'ուղարկէ իր երեսփոխանները, 1934 թ.ին՝ Վահրամ Լէյլէկեան, իսկ 1938 թ.ին՝ Սոսորով Թիւթիւնճեան։ Այս ընտրապայքարները առատ նիւթ կը հայթայթեն մամուլին եւ կը ծառայեն կուսակցական կիրքերու հրահրման։

Գալով գրականութեան փթթումին՝ երկու հաստատութիւններ առաջնորդողի դեր կը կատարեն - Կիպրոսի Մելգոնեան հաստատութիւնը եւ Պէյրութի Հայ Ճեմարանը (յետոյ վերամկրտուած Նշան Փալանճեան Ճեմարան)։ Այս զոյգ հաստատութիւնները, հիմնուած 1925 թ.ին եւ 1929 թ.ին, կը հասցնեն շրջանաւարտներ, որոնք պեղեցիկ դպրութեանց հուրը իրենց արտերուն մէջ՝ կը նուիրուին գրականութեան։ Նախկին տասնամեակը գրականու-

Թեան պարարտ հող չէր կրնար ըլլալ, որովհետեւ մեր ճղակոտոր եղած ժողովուրդը իր վէթքերը դարմանելու ետեւէն էր: Իր օրապահիկը շահելու, հազարաւոր որբերու պատասպարման եւ գործ դնելու, ու տարբական կրթութիւն մը ջամբելու կը հետամտէր, ուրեմն՝ ո՛չ տրամադրութիւնը եւ ոչ ալ կարելիութիւնը կար դրականութիւն մշակելու: Կը պակասէր նաեւ դրական անցեալ ունեցող առաջնորդ տարրը: Յակոբ Օշական եւ Վահէ Վահեան՝ Մելքոնեանի մէջ, Շանթ ու Աղբալեան՝ Հայ Ճեմարանին մէջ կը փոխանցէին դրականութեան հուրը: Եւ եթէ այսօր լիբանանահայ դրական հրապարակին վրայ համբաւ ունեցող գրողներ ունինք, անոնց մէկ կարեւոր մասը կու գայ այս տասնամեակէն:

Գրականութեան ուլասիւի դեր կը կատարէ Տիկին Սեղայի (Սիրան Զարիֆեան) Երիտասարդ Հայուհի ամսաթերթը (1932-34 թթ.), որ լոյս կը տեսնէ որպէս կանանց թերթ, սակայն իր աշխատակիցներուն մեծ մասը այր գրողներ են - Միհրան Տամատեան, Վահէ Վահեան, Ներսէս Քիւրիեան, Եղուարդ Տարօնեան, Վարդան Գէորգեան, եւն.։ Դեռ հեռու ենք լայնաշունչ գրականութենէն. սակայն լոյս ընծայուած գեղագիտական յոդուածները, օտար գրականութենէն կատարուած թարգմանութիւնները, գրախօսականները, քերթուածները, մա՛նաւանդ ամսագրին մաքուր լեզուն եւ էջադրումը՝ դրական ճաշակի կազմաւորման կը նպաստեն:

1939 թ.ի ամառը՝ երբ աշխարհ համաշխարհային պատերազմի մը նախօրեակին կը գտնուէր, Պէյրութի մէջ կը սկսին լոյս տեսնել դրական երկու թերթեր՝ Հայ Գիր (1939-1944 թթ.) եւ Ծիածան (1939-1949 թթ.): Գրելու մարմաջով մղուած երիտասարդութիւնն է որ հրապարակ կը նետուի եւ իր տագնապը կ'ուզէ փոխանցել հանրութեան: Հաստատում մը անհրաժեշտ է: Հայ Գիրի եւ Ծիածանի, ինչպէս նաեւ հետագային լոյս ընծայուած դրական հանդէսները նախաձեռնողները սփիւռքի պայմաններուն մէջ հասակ առնողներն են: Երէց սերունդը եթէ յոգնութեան նշաններ ցոյց կու տայ եւ իրեն կը պակսի անհրաժեշտ նախաձեռնութեան ոգին, երիտասարդութիւնն է որ կը խլրտի եւ կը ստեղծէ բեմեր, ուր երէց սերունդն ալ հանդէս կու գայ:

Հայ Գիրը լոյս կ'ընծայուէր նախաձեռնութեամբ Վազգէն Այւոնիի, իսկ Ծիածանը հրատարակութիւնն էր Հ. Բ. Ը. Միութեան Հ. Ե. Ը. -ի Գրասէր Երիտասարդներու Միութեան, արտօնատիրութեամբ՝ Սիսակ Վարժապետեանի եւ խմբագրապետութեամբ՝ Բիւզանդ Եղիայեանի: Պէտք է ընդունիլ որ մեր դաղութիւն կարգ մը գրողները, ինչպէս նաեւ հայրենիք ներգաղթած կարգ մը

գրողներ, իրենց կազմաւորման անհրաժեշտ հողը այս թերթերուն մէջ գտան: Այդ գրողներն էին՝ Ստեփան Ալաճաճեան, Զարեհ Մելքոնեան, Սահակ Պալլաճեան, Սիսակ Վարժապետեան, Գրիգոր Կիւլեան, Գրիգոր Սիսուան, Տոբթ. Տիգրան Վարժապետեան, Գրիգոր Քէշիշեան, Յ. Նորունի, Անդրանիկ Նաճարեան, Անդրանիկ Թերզեան, Պետրոս Պարզեւ (Փայասլեան), Յակոբ Պօղոսեան (Բոցար), Նուպար Զարխուտեան, Պարզեւ Շահպազ, Ե. Ներսեհ (Երուանդ Պարսումեան), Հայկազէն Ուզունեան, եւն.:

Վերոյիշեալ ամսաթերթերը, ինչպէս նաեւ գալիք տասնամեակներու լոյս ընծայուելիք հանդէսները, կ'ունենան ուրիշ դեր մը – տեղակամ միջոցներ հայքայքել գրականութեան (իր լայն առումով առնուած) մշակման եւ լոյս ընծայման: Եթէ նախապէս գլխաւորաբար Փարիզի Անախիտ-ը, Պոսթընի Հայրենիք Ամսագիր-ը եւ Նիւ Եորքի Հայաստանի Կոչնակ-ը կը հիւրընկալէին լիբանանահայ գրողներու գործերը, ներկայիս կը փոխուի այդ կազմանահայ գրողներու գործերը, հետզհետէ կը նուազեցնէ իր աշխատակցութիւնը արտասահմանեան թերթերուն եւ կը սկսի նիւթ հայթայթել իր տեղական հանդէսներուն: Այս վերջինները ո՛չ միայն բաւարարութիւն կու տան իրենց տեղական պահանջներուն, այլ նաեւ, շրջելով դերերը, իրենց էջերուն մէջ կը հիւրընկալեն Եգիպտոսէն, Ֆրանսայէն, Պելճիքայէն, Պարսկաստանէն եւ զոյգ Ամերիկաներէն հայ գրողներ:

Տեղական հանդէսներու գոյութիւնը կ'ունենայ այլ նպաստ մը եւս՝ առանձին հատորներու հրատարակումը: Արդարեւ հանդէսները կ'ունենան իրենց մատենաշարները: Թերթերը իրենց էջերուն մէջ հիւրընկալած լուրջ ուսումնասիրութիւնները, պատմութեանը, վէպերը լոյս կ'ընծայեն որպէս առանձին հատոր:

Այս տասնամեակի գլխաւոր միւս հրատարակութիւններն են. Հասկ – պաշտօնաթերթ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Սկսած է 1932 թ.ի Յունուարին եւ ցարդ կը շարունակուի: Գարեգին Կթղ.ի դահակալութեան շրջանին (1944-1951 թթ.) կը դառնայ կրօնական, բանասիրական եւ պատմական բովանդակալից ամսաթերթ մը: Լոյս ընծայած է Հայագիտական Հասկ-ի 3 հատոր: Ներկայիս հիմնականօրէն դարձած է Կաթողիկոսական լրատուութեան կամ տեղեկատուութեան թերթ եւ իր բովանդակութիւնը չի գտնուիր բաղձալի բարձրութեան վրայ:

Աւետիք – պաշտօնական ամսաթերթ Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան Տանն Կիլիկիոյ: Սկսած է 1932 թ.ի Մարտի 28-ին եւ ցարդ կը շարունակուի: Էսպէս տեղեկատուութեան թերթ Հայ

Կաթողիկէ Պատրիարքութեան, թեմերու եւ առաքելութիւններու: Այս տեղեկատուութեան հիմնական սկզբունքը եղած է Կաթողիկէաւթիւնը Հայութեան մէջ, Հայութիւնը Կաթողիկէաւթեան մէջ:

Զարքօնք - սկսած է լոյս տեսնել 1937 թ.ի Սեպտ.ի 26-ին: Հրատարակութեան դաղափարը յղացած են Միհրան Տամատեան եւ Յովհաննէս Սեքսենեան: Առաջին խմբագիրը եղած է Վահան Թէքէեան, որ եգիպտոսէն մասնաւոր հրաւերով կանչուած է թերթը ամուր հիմերու վրայ դնելու համար: Քանի մը ամսուան խմբագրական աշխատանքէ ետք ան կը վերադառնայ եգիպտոս: Ապա յաջորդական խմբագիր եղած են Լեւոն Թիւթիւնճեան, Երուանդ Քէշիշեան, Գրիգոր Պեքերեճեան, Համբարձում Գումբուռեան, Մագսուտ Մալաուտեան, Մարտիրոս Տէր Ստեփանեան, Կարապետ Գաւլաքեան, Գրիգոր Կիւլեան, Յակոբ Դաւիթեան, Միքայէլ Նաթանեան:

Քառորդ դարէ աւելի խմբագրապետութիւնը կը վարէ Գերսամ Ահարոնեան: Ներկայիս անոր կողքին որպէս խմբագիր կը դործէ Նազարէթ Թոփալեան:

Իր հրատարակութեան ընթացքին Զարքօնք ստեղծած է զանազան բաժիններ՝ առանձին պատասխանատուներով - Զարքօնք Գրական, Զարքօնք Պարստիկէն, Զարքօնք Մարգալան, Զարքօնք Գիտական: Որպէս առանձին հրատարակութիւն լոյս տեսած է Զարքօնք Սփոր-ը (1955-1957 թթ.) խմբագրութեամբ Վարուժան Պետիկեանի: Լոյս ընծայուած է նաեւ Զարթօնքի արարերէն հրատարակութիւն մը՝ շուրջ մէկ տարի (1957 թ.):

Արարատ - սկսած է լոյս տեսնել 1937 թ.ի Նոյ.ի 7-ին: Օրկան Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի շրջանի: Սկիզբը երկօրեայ, ապա՝ օրաթերթ: 1941-42 թթ. դադրած: Արտօնատէր՝ Գրիգոր Հաճնլեան, Պատ. Տնօրէն՝ Օննիկ Ճամպուլեան: Ժամանակի ընթացքին թերթը խմբագրած են Արմենակ Էլոյեան, Արսէն Կիտուր, Միհրան Սէֆէրեան, Արմէն Ղարիպ, Օննիկ Ճամպուլեան, Հրանդ Գանգրունի, Ժիրայր Նայիրի, եւլն.:

Ա. Թիւին մէջ բանաձեւելով իր դաւանանքը, խմբագրութիւնը կը գրէ.

«Սոցիալական կեանքի մէջ՝ դեմոկրատական խաւի գոռ հնչիւնն է Արարատ-ը: Համաշխարհային ռազմադաշտին վրայ արիօրէն ինկող հայ ազատագրութեան մարտիկի ձայնն է Արարատ-ը:

«Մեծն Լիբանանի տնտեսական վերելքին իր եղունգներովը մասնակցող հայ աշխատաւորի կանչն է Նա:

«Իր պարտականութիւնը հանդէպ իր լիբանանեան հայրենիքին լիովին կատարող հայ ժողովուրդին իրաւունքն է Արարատ-ը:

«Արարատ-ն է ընտրուած որպէսզի նա աւելի մօտիկ ըլլայ Արդարութեան ահանջին»:

Արարատ ժամանակի ընթացքին ծնունդ տուած է հետեւեալ հրատարակութիւններուն:— 1) Արարատ Երաբօրեակ (1949 թ.ի նոյ.ի 13—1954 թ.ի Սեպտ.ի 5): Անշատ հրատարակութիւն մը չէ, այլ կիրակի օրուան բացառիկ: Խմբագրած են՝ Օննիկ Ճամպուլեան եւ Յակոբ Պարոտեան: 2) Արարատ Գրական — 1956 թ.ի Յունուար—Սեպտ., 15 թիւ, երկշաբաթաթերթ: 1956 թ.ի նոյ.ին դարձած է ամսապար (չբնօրէկ ձեւով) եւ լոյս տեսած է մինչեւ 1963 թ.: Խմբագիրներ՝ Յակոբ Նորունի, Հրանդ Գանդրունի, Ժիրայր Նայիրի, Մ. Ուրարտու (Սարգիս Խոսեան), Երուանդ Գարսեան: 3) Արարատ Մարգական — շաբաթաթերթ, 1956 թ.ի Դեկտ.ի 17—1958 թ.ի Յունիսի 1, 69 թիւ: Նախաձեռնութիւն՝ Հ. Մ. Մ. Պէյրուի Երջանի Տեղական Վարչութեան: Խմբագիր՝ Գէորգ Տարօնի:

Ժողովուրդի Զայն — Հայ Համայնավարները միշտ ալ գործակցած են Լիբանանի Համայնավար կուսակցութեան հետ եւ իրենց քաղաքական օրաթերթերն ու շաբաթաթերթերն ալ լոյս տեսած են Լիբանանի Համայնավար կուսակցութեան պաշտօնաթերթերուն անունները օգտագործելով:

1937 թ.ի Ժողովուրդի Զայն-ի տպագիր հրատարակութեանէն առաջ՝ գլխաւորութեամբ Յարութիւն Մատեանի, լոյս տեսած են առանց արտօնադրի՝ խմորատիպ հրատարակութիւններ — Նոր Փարոս (1925 թ. 2 թիւ), Կարմիր Արշալոյս (1931—32 թթ. 4 թիւ), Մարտակոչ (1934 թ. 4 թիւ):

1937 թ.ին՝ Լիբանանի Համայնավար կուսակցութիւնը Նիքոլա Ծառուի խմբագրութեամբ՝ օրինաւորապէս լոյս կ'ընծայէ Սաւաք էլ Ծապա թերթը, որուն կը հետեւի Ժողովուրդի Զայն-ը, որպէս յաւելուած: 1938—39 թթ. եղած է շաբաթաթերթ, 1942—48 թթ. օրաթերթ: 1943 թ.ին լոյս տեսած է որպէս ամսաթերթ, 4 թիւ, գլխաւորաբար վրական բովանդակութեամբ:

Թերթը խմբագրած են Յարութիւն Մատեան (սկզբնական շրջանին) եւ Յովհաննէս Աղապչեան: Աղապչին կեանքէ աւելի արձագանգած է Համաշխարհային Համայնավարութեան իրադարձութիւններուն եւ ի մասնաւորի Խորհրդային Միութեան Բ. Աշխարհամարտի ընթացքին տարած յաղթանակներուն: Թերթը իր փառքի օրերը կ'ապրի 1945—47 տարիներուն երբ վերջ կը գտնէ պատերազմը եւ կը սկսի հայրենադարձը: Այդ օրերուն ամենէն տարածուած թերթն է եղած եւ ամենէն գործօն մասնակցութիւնն է բերած ներ-

դադարի առիթով Սուբիոյ եւ Լիբանանի Հայ դադութին մէջ ստեղծուած պայքարին :

Առաւօտ (1938 թ.ի Հոկտ.ի 24-1946 թ.) Տնօրէն խմբագիր՝ Հրանդ Տէվէճեան : Ծառաթաթերթ, ապա երկօրեայ, յետոյ օրաթերթ : Սկսած է լոյս տեսնել որպէս դժուոճ դաշնակցականներու թերթ : Հ. Տէվէճեանի կողքին խմբագրական աշխատանք կատարած է բանաստեղծ Արսէն Աճէմեան :

Հրանդ Տէվէճեան իր դժգոհութենէն պիտի անցնէր հակա-ոսկորդի դերին եւ ներպաղթի օրերուն՝ գործօն դեր պիտի ստանձնէր անոր կազմակերպման կոմիտէութեան մէջ եւ ապա ինք ալ պիտի մեկնէր Հայրենիք, ուր քիչ ետք պիտի մահանար :

Պատանեկան Արձագանգ - սկսած է 1936 թ.ի Դեկտ.ի 1-ին . ցարդ կը շարունակուի : Հիմնադիր եւ խմբագիր՝ Մանասէ Յ. Ծնորհօքեան : Այս թերթը կու դայ բաց մը լեցնել : 1925-26 թթ. լոյս տեսած էին Ովասիս-ը եւ 1933-34 թթ. Պատուելի Հայկազուն Ղազարեանի Հայ Պատանի-ն, սակայն ժամանակաւոր կեանք մը ունեցած էին անոնք : Հրապարակի վրայ գոյութիւն ունեցող մամուլը մեծ մասամբ նկատի ունէր երիտասարդ եւ հասուն ընթերցող հասարակութիւնը : Բարձի թողի եղած էին Հայ պատանին ու պատանուհին : Մանասէ Ծնորհօքեանի թերթը ահաւաստի կու դար ընթերցանութեան նիւթ հայթայթել այդ անտեսուած սերունդին, օղակ մը հանդիսանալ աստ ու անդ ցրուած Հայ պատանիներուն միջեւ, ու նաեւ փոխանցել տարիքոտ մարդոց փորձառութիւնը՝ կեանքին նոր բացուող պատանեկութեան :

Մ. Ծնորհօքեան իր այս առաքելութիւնը պատուաւոր կերպով քառօրդ դար մը կատարելէ ետք իրեն յաջորդեց Պատուելի Պարզեւ Տարազեան (1962 թ.ի Յունուարէն սկսեալ), որպէս օրնական խմբագիր ունենալով Տիկ. Ժանէթ Քասունին :

Պատանեկան Արձագանգ-ի կողքին որպէս իր յաւելուածը սկսած է լոյս տեսնել Զաւաւէր-ը (1937 թ.ի աշունէն սկսեալ) : Հրատարակութիւն՝ Սուբիոյ եւ Լիբանանի Հայ Աւետարանական Բրիտանիական Զանից Ընկերակցութեանց : Արձագանգած է Զանից ընկերակցութեանց զանազան մասնաճիւղերու գործունէութեանց եւ կրօնական հարցերու : Հետզհետէ ընդլայնելով իր ծիրը ընդգրկած է նաեւ գրականութիւն - ինքնուրոյն եւ թարգմանական :

Սկզբնական շրջանին խմբագրական կազմով լոյս տեսած է : 1945 թ.ին Մանասէ Ծնորհօքեան ստանձնած է նաեւ Զաւաւէր-ի խմբագրութիւնը մինչեւ 1968 թ.ը : 1969 թ.էն սկսեալ դայն կը խմբագրէ Պատ. Պարզեւ Տարազեան : 1963 թ.ին ինչպէս եւ 1968-

1969 թթ. Զամասէր-ի դրական-զեղարուեստական բաժնի խումբ-ագրութիւնը վարած է Երուանդ Քասունի:

Գ. ՏԱՍՆԱՄԵԱԿ (1941-1950)

Համաշխարհային Երկրորդ Պատերազմը, հայ ժողովուրդին ամձնուէր եւ հերոսական մասնակցութիւնը այդ պատերազմին. հայ ժողովուրդի յոյսերուն՝ ներգաղթի եւ հայկական հողերու ընդարձակման հարցերը հիմնական նիւթը կը կազմեն այս տասնամեակին:

Բ. Աշխարհամարտի ընթացքին հայութեան զանազան հատուածներուն միջեւ ստեղծուած էր հանդուրժողութեան եւ համերաշխութեան ոգի մը եւ զանազան հատուածներու դրողներ կ'աշխատակցէին իրենց հատուածներուն չպատկանող դրական եւ մշակութային հանդէսներու: Օրինակ՝ Հայ Ճեմարանի Երջանաւարտից Միութեան Ակօս-ին աշխատակցած են Զարեհ Մելքոնեան, Անդրանիկ Նաճարեան, Սահակ Պալըզեան, Երուանդ Պարոտեան, Արամ Արման, Սմբատ Փանոսեան. իսկ Հ. Ե. Ը-ի Գրասէր Երիտասարդներու Միութեան Ծիածան-ին՝ Մուշեղ Իշխան, Եղևարդ Պոյաճեան, Բոցար, Եւլն: Ծիշդ է որ այս աշխատակցութիւնը մնայուն հանգամանքի չէ վերածուած, սակայն եղածն իսկ յուսատու երեւոյթ մըն էր ապագայ ծաւալուն աշխատակցութեան մը եւ հետեւաբար, հատուածներու միջեւ աւելի սերտացման մը: Սակայն հազիւ սկսած էր այդ համերաշխութիւնը իր ծիլերը արձակել՝ փոթորիկ մը կու գար աւել աւելն ինչ: Ներգաղթին էր այդ փոթորիկը:

Հայաստանն ու ներգաղթը այն երկու յուռութքներն են, որոնք դրականութեան զանազան սեռերու մշակման մղիչ ոյժը կը հանդիսանան: Քերթուածի, պատմուածքի եւ վէպի առատ նիւթ կը հայթայթեն: Այս սրբութիւնները սակայն կ'ունենան նաեւ իրենց մոայլ երեսները. կը բորբոքեն կուսակցական անթեղուած վէճերը եւ լիբանանահայութիւնը կ'առաջնորդեն երկփեղկումի: «Հրաժարական»ի պահանջը կը խրտչեցնէ շատերը եւ կը կարծրացնէ սմանց դիրքերը: Լիբանանահայ քաղաքական կուսակցութեանց միջեւ հակամարտ պայքարը պիտի վերաթարծուի եւ յաջորդ տասնամեակին իր դադաթնակէտին հասնելով, 1965 թ-ին՝ հայ եղեռնի յիսնամեակին առիթով հետզհետէ տեղատուութեան նշաններ ցոյց պիտի տայ:

Համաշխարհային Բ. Պատերազմին վախճանը եւ ՄԱԿ-ի ստեղծումը առիթ պիտի ընծայեն որպէսզի Հայկական Դատի հե-

տապնդման աշխատանքներ կատարուին: Մամուլը պիտի դբադի Հայկական Դատի յանձնախումբերու յուշագիրներով եւ Հայկական հողերու պահանջներով, լայն տեղ տալով մեր հողերու պատմութեան եւ աշխարհագրութեան:

Այս տասնամեակի կարեւոր թերթերուն անդրադառնալէ առաջ հաստատում մը անհրաժեշտ կը նկատենք: Եթէ նախկին տասնամեակը ծնունդ տուած էր հայ քաղաքական կուսակցութեանց քաղաքական օրաթերթերուն, այս տասնամեակը ծնունդ պիտի տայ նոյն քաղաքական կուսակցութեանց ուղղակի կամ անուղղակի հովանաւորութիւնը կրող դրական եւ գեղարուեստական հանդէսներու: Օրաթերթը յարմար ենթահող չէր կրնար ըլլալ դրականութեան եւ գեղարուեստի ուռճացման: Հետեւաբար՝ աւելի ձեռնտու հրատարակութիւններու կարիքը կար: Եւ հետզհետէ, կարծէք բարի նախանձէ մղուած, կը սկսին զանազան հանդէսներ լոյս ընծայուիլ: Ռամկավար-Բարեգործական հաստուածը ունէր Ծիածանը, որուն կաղացումով, կը սկսի Վահէ Վահեանի Աճիւն (1940 թ.ին): Հնչակեան հաստուածը լոյս կ'ընծայէ Հ. Մ. Մ. ի Կայծը (1943 թ.ին), դաշնակցական հաստուածը Ազգակ Շարաքօրեակը (1944 թ.ին) եւ Հայ Ճեմարանի Ակօսը (1944 թ.ին), իսկ հայ համայնավարները՝ Ժողովուրդի Ձայն ամսաթերթը:

Այս տասնամեակի գլխաւոր նոր թերթերն են.

Ազգաբար Շարաքօրեակ (1942 թ.ի Հոկտ.ի 24-1953 թ.): Խմբագրելը՝ Մանուկ Ասլանեան: Խմբագրական վաստակ ունեցող անձ մըն էր ան: Արդարեւ Պոլիս խմբագրած էր Ազգաբարը (1927-1936 թթ.), իսկ Պէյրութի մէջ Ազգակը: Իր առաջին խմբագրականին մէջ թերթին ուղղութեան մասին ան կը գրէ. «Կանխիկ ճշդ դենք թէ այս թերթը ռուէ կ'ապ չուի ռուէ կուսակցութեան հետ, այլ չէզոք ու անկախ է: Աւելի ճիշդ՝ կախուած է միայն հայութեանէն, անոր շահն ունենալով որպէս զսպանակ եւ առաջնորդ»: Թերթին այս չէզոքութիւնը կը պահուի մինչեւ Մ. Ասլանեանի մահը, սակայն անկէ ետք հետզհետէ կը թեքի դէպի դաշնակցական ուղղութիւն: Մ. Ասլանեանի մահէն ետք թերթը կը խմբագրեն Ջարեհ Ջարդուն, Եղիշէ Մանուկեան եւ Օննիկ Թոփուպեան: Այս վերջինը նոյնիսկ կը դնէ թերթը եւ իր օրով արդէն հաստատօրէն դաշնակցական ուղղութիւն ունեցող թերթի կը վերածուի:

Թերթը ունեցած է աշխատակիցներու փաղանդ մը՝ Տիկին Սեդա, Մինաս Թէօլէօլեան, Գասպար Իփէկեան, Խորէն Գաբիկեան, Արշաւ Խոնդկարեան, Վեր. Եղիա Քասունի, Մ. Իշխան, Հայկ Ժամկոչեան, Նիկոլ Աղբալեան, եւլն.:

Սկզբնական տարիներուն՝ լայն արձագանդ կու տայ դադու-
թին մշակութային ձեռնարկներուն. օրինակ՝ Հոն են Ն. Աղբալեա-
նի Հայ մատենագրութեան վերաբերող դասախօսութիւնները, Շա-
հան Պէրպէրեանի դեղալիտական դասախօսութիւնները, եւլն.:

Մանուկ Ասլանեանի մասին կարելի է ըսել որ ան խմբագիր
ծնած մարդն էր: Իր խմբագրականները կը յայտնաբերեն Հայ լեզուի
բժանդրութիւն, ազգային հարցերու քաջատեղեակութիւն, եւ ա-
մենէն կարեւորը՝ կիրքի, հակամարտութիւն ստեղծելու բացակա-
յութիւն:

Ազգաբարձ 1953 թ.ի Սեպտ. 1-ին դարձաւ օրաթերթ, խմբ-
ագրապետութեամբ Խոսրով Թիւթիւնճեանի եւ խմբագրութեամբ
Օննիկ Թոփուզեանի: Այս շրջանին լոյս կը տեսնէր որպէս դաշնակ-
ցութենէն դժգոհներու թերթ: Դադրեցաւ 1955 թ.ին:

Ե Ազգակ Շաքաթօրեակ (1944 թ.ի Մարտի 3-1952 թ.) խմբագ-
րական կազմ՝ Ա. Լէյլանի (Մովսէս Տէր Գալուստեան), Մ. Իշ-
խան եւ Կարօ Սասունի: Վարիչ խմբագիր՝ Կարօ Սասունի:

Հակառակ Բ. Աշխարհամարտի բերած ահ ու դողին, մշա-
կութային հասունացում մը նշմարելի է Սուբրոյ, Լիբանանի, Պա-
ղեստինի եւ Եգիպտոսի մէջ: Գրելու շնորհ ունեցող երիտասարդ-
ներ կան, իսկ հիները բնա՛ մը կ'ուզեն: Ընթերցող հասարակու-
թիւնը լայն հետաքրքրութիւններ ունի, որոնց գոհացումը կը
փնտռէ: Այս շարքաթերթը ահաւասիկ կը նկրտի գոհացում տալ
այս պահանջներուն: Առաջին հերթին անշուշտ հիներն են, որոնք
իրենց աշխատակցութիւնը կը բերեն, որոնց մէջ կան Կ. Սասունի,
Արշակ Յովհաննէսեան, Նիկոլ Աղբալեան, Գառնիկ Գլուզեկեան:
Միջին սերունդէն՝ Մ. Իշխան եւ Եղուարդ Պօյաճեան: Իսկ նորե-
րէն Հոն Իրենց նախաքայլերը կ'առնեն Յ. Գեղարդ (Տոքթ. Յարու-
թիւն Գաղանճեան), Գրիգոր Շահինեան, Անդրանիկ Ուրֆալեան,
եւլն.:

Սկզբնական տարիներու իր առուգութիւնը կը կորսնցնէ եւ
կը դադրի 1952 թ.ին:

Կայծ (1943-47 թթ.) Հ. Մ. Մ.ի պաշտօնաթերթ: Խմբագիր՝
Արմէն Ղարիպ: Որոշ շրջաններու օժանդակ խմբագիրներ եղած են
Յովսէփի ձիւեան եւ Հրանդ Գանդրունի: Թերթին նպատակն է ե-
ղած «պատրաստել այնպիսի նոր սերունդ մը, որ կարողանայ Հայ
ժողովուրդին պատմա-անհատական գոյութիւնը ստանձնել եւ մա-
նաւանդ արդարացնել»: Եւ այս նպատակին իրադրո՞ման համար
ահաւասիկ թերթը կը մշակէ դրականութիւն, ընկերաբանութիւն,
մարմնակրթանք, դեղարուեստ, եւլն.:

Թերթը Հ. Մ. Մ. ի պաշտօնաթերթը ըլլալով լայն արձագանգ կու տայ այդ միութեան Սուբիոյ եւ Լիբանանի մասնաճիւղերուն զանազան գործունէութեանց :

Ակօս (1944 թ. ի Ապրիլ-1960 թ. ի Դեկտ.) : Սկիզբը որպէս երկամսեայ, ապա՝ 1953 թ. ի Յունուարէն սկսեալ ամսաթերթ : Զեռնարկ Հայ ձեմարանի Երջանուարտից Միութեան : Լայն առաջադրանքներով երկամսեայ մը, պատրաստ հիւրընկալելու «վէպն ու պատմութեան», թատերախաղն ու բանաստեղծութիւնը, բանասիրութիւնն ու պատմագրութիւնը, գրական քննադատութիւնը, արուեստները՝ իրենց բոլոր երեսներով : Երջանուարտից Միութեան Զեռնարկ վերատուրիւնը պարզապէս անուն է : Միութեան նպատակն է եղած՝ տալ բեմ մը, ուր զան հին ու նոր գրողները կատարել իրենց զերերը : Եւ սկզբնական շրջանին առաւելաբար հիներն են որ տեղ կը դանեն հոն - Լ. Շանթ, Ն. Աղբալեան, Արշակ Յովհաննէսեան, Կ. Սասունի, Գասպար Իփէկեան, Գառնիկ Գիւլբեկեան, Ս. Վրացեան, Վեր. Եղիա Քասունի, Մկրտիչ Պարսամեան, Արսէն Երկաթ, Արամ Գառօնէ, Յակոբ Օշական, Նիկողոս Սարաֆեան : Զեմարանական սերունդէն հոն են Եղուարդ Պոյաճեան, Գառնիկ Բանեան, Մ. Իշխան, Բոցար (Յակոբ Պօղոսեան), Յ. Գեղարդ, Օննիկ Թոփուղեան, Հուրի Իփէքեան, Աշոտ Նուրեան, Գրիգոր Շահինեան, Շաքէ Տէր Մելքոնեան, Յակոբ Ժամկոչեան : Տակաւին հոն են այլ գրողներ՝ Ժազ Ս. Յակոբեան, Տիգրան Ոսկունի, Պ. Յունայ (Պօղոս Մնայեան), եւլն. :

Թերթը խմբադրած են՝ առաւել կամ նուազ ժամանակով՝ Գառնիկ Բանեան, Աշոտ Նուրեան, Յ. Գեղարդ, Յակոբ Ժամկոչեան, Շաքէ Տէր Մելքոնեան : Առաջին ու վերջին խմբադիրն է եղած Գառնիկ Բանեան :

Լիբանանահայ միակ հանդէսն է որ պատմագրական ուսումնասիրութիւններու լայն տեղ թուած է : Հոն է որ Գառնիկ Գիւլբեկեան ստորադրած է իր պատմագրական վերլուծական լուրջ յօդւածները : Կան նաեւ Վեր. Եղիա Քասունիի պատմագրական ուսումնասիրութիւններէն ոմանք :

Ու տակաւին որպէս այլ արժանիք կարելի է հաստատել, որ Լիբանանահայ միակ հանդէսն է որ լոյս ընծայած է իր նիւթերուն ցանկերը - Ա.-Ժ. տարի, կազմող՝ Յ. Գեղարդ, ԺԱ.-ԺԵ. տարի, հաւանական կազմող՝ Գ. Բանեան : Նիւթերու ցանկերու այս պատրաստութիւնը անհրաժեշտ մարզ մըն է, որ սակայն սովորաբար բարձի թողի մնացած է մեր մամուլին մօտ :

Ակօս-ի դադարումով իրեն պիտի յաջորդէր Բագիմ ամսաթերթը, այլ ծրագրով եւ նաեւ խմբադրական այլ կազմով :

ԱՅԻ (1946 թ. Ապրիլ-1955 թ.): Խմբագիր՝ Վահէ Վահեան: Ամսագիրը կը հետամտի ըլլալ «այն ոստանը, ուր, կարօտագիրն սրտազեղումով մը, իրարու ձեռք պիտի տան մարդկային եղբայրութեան ու հայ հողիի փառքին աշխատաւորները:» ԱՅԻ-ն լայնօրէն կ'օգտուի աշխատակիցներու այն խմբակէն, որ բոլորուած էր Ծիածան երկամսեայ հանդէսին շուրջ:

ԱՅԻ-ն լուրջ թերթ մըն է, որ չունենալով հանդերձ միութեան մը սաշտօնական հովանաւորութիւնն ու օժանդակութիւնը, խմբագրին աշխատասիրութեան եւ տոկունութեան շնորհիւ, գրեթէ տասնեակ մը կը պահէ իր գոյութիւնը եւ հարուստ բովանդակութիւն կ'ունենայ: Լոյս կ'ընծայէ լուրջ ուսումնասիրութիւններ հայ ճարտարապետութեան (Ս. Ճէվահիրճեան) եւ հայ գեղարուեստի (Ծ. Պէրպէրեան) վերաբերեալ:

Եթէ Ծիածան ամսաթերթին աշխատակիցները մեծ մասամբ տեղական ուժեր էին, ԱՅԻ-ի կը ժառանգէ այդ «մարդկային դրամադուրը» եւ իր վերկը լայն բանալով՝ կ'ապահովէ նաեւ արտասահմանի հայ գրողներու աշխատակցութիւնը: Սկսնակ գրողներ գրեթէ չունի: Հանդէսը կը դառնայ արգասաբեր հող մը, ուր կ'աճին արդէն դրական անցեալ ունեցող գրողներ: Հոն են՝ Բ. Թօփալեան, Զ. Որբունի, Մ. Աթմաճեան, Բ. Եղիայեան, Զ. Մեղքոնեան, Գ. Ալըարեան, Ս. Տէրունեան, Բ. Նուրիկեան, Ս. Շահապազ, Ա. Սրապեան, Ա. Անդրէասեան, Ս. Փանոսեան, Ժ. Յակոբեան, Տ. Զիթունի, Ա. Ալպոյաճեան, Ա. Նաճարեան, Օ. Աւետիսեան, Ա. Սարուխան, Ս. Սիմոնեան, Գ. Ահարոնեան, Մ. Տէր Ստեփանեան, Հ. Զարդարեան, Եղիվարդ, Տ. Վարժապետեան եւ ուրիշներ:

Մասնաւոր էջեր կը յատկացնէ միջազգային գրականութեան, ներկայացուող գրողներուն կեանքին ու արուեստին անդրադառնալէ ետք տալով թարգմանուած կտորներ:

Վ. Վահեան կը հաստատէ ԱՅԻ ամսագրի մատենաշար մը, առանձին հատորով լոյս ընծայելով իր աշխատակիցներուն սովորաբար գրական գործերը:

Խմբագրին ստորագրած դրախօսականները կը յայտնաբերեն դրական քննադատութեան հասկացողութիւն եւ օժտուած են գրեթէ անսխալ հայերէնով մը: Հանդէսը լայն տեղը կու տայ խորհրդահայ գրականութեան՝ արտատպումի ճամբով:

ԱՅԻ-ի հրատարակումը կարծէք ամլութեան կը դատապարտէ բանաստեղծ Վահէ Վահեանը եւ զարկ կու տայ արձակագիր Վահէ Վահեանին: Այդ արձակը արտայայտուած իր Յարալէզնբու հաշտութիւնը հայրենական տպաւորութիւններուն, գրական հարցերու վերլուծման եւ դրախօսականներուն մէջ:

Մասիս (Շարաթաթերթ), 1947 թ.ի Յունուարի 1-էն սկըսեալ: Ունեցած է եկեղեցական պատասխանատուներ, սակայն թերթին ծնունդէն մինչև այսօր Հրաչ Քաջարեանցն է որ խմբագրական աշխատանք կատարած է: Ինչո՞ւ այս հրատարակութիւնը: Հայ Կաթողիկէ համայնքը ունէր Աւետիք ամսաթերթը, սակայն անոր ծրագիրը, ամսաթերթի հանդամանքը, թոյլատու չէին արագ տեղեկատուութեան միջոց մը ըլլալու: Ուստի լոյս կը տեսնէ շարաթաթերթ Մասիս-ը, որ «իբ տեսութիւններուն, տեղեկութիւններուն, ուսումնասիրութիւններուն մէջ պիտի դնէ դրականին, պատմականին, բանասիրականին, գիտականի կողքին՝ կրօնականն ու բարոյականն ալ, իրաւագիտականի կողքին՝ ընկերարանականն ալ, օլտակարի կողքին՝ հաճոյականն ալ պիտի չանտեսէ»:

Երիտասարդ Հայուհի (1947 թ.ի Յունիսի 1-1968 թ.ի Դեկտ): Սկիզբը երկշարաթաթերթ, ապա՝ ամսաթերթ: Խմբագրապետ՝ Սիրան Սեզա:

Նախկին տասնամեակին լոյս տեսած էր արդէն Երիտ. Հայուհիին եւ 13 տարուան դադարէ մը ետք կը վերահրատարակուի, այս անգամ աւելի երկար դիմանալու համար: Վերհրատարակութեան առթիւ խմբագրապետը կը յայտնէ. «Այս էջերէն հայ կիներ պիտի կարենայ վերադառնել ուղղէն լինելութեան այն բոլոր տուեալները, որ իրն են եղած անցեալին մէջ: Այս էջերէն հայ կիներ նոր արժէքաւորումի եւ հետեւաբար նոր դնահատումի պիտի տանի իր դերն ու դիրքը հայ պատմութեան, հայ մշակոյթին, հայ կրօնքին ու հայ անունին հետ դէմ առ դէմ»:

Այս Բ. շրջանին աւելի բախտաւոր կ'ըլլայ ապահովելով աշխատակիցներու կողքին աշխատակցուհիներ ալ - Շամունէ Գույումճեան, Եոլանտ Աճէմեան, Անահիտ Ն. Դաւիթեան, Բերկրուհի Նաճարեան, Նոյեմի Գրիգորեան, Հուրի (Ժանէթ Քասունի), եւլն.: Այրերէն կ'աշխատակցին Գարեգին Կթղ., Բ. Եղիայեան, Շ. Պէրպէրեան, Տոքթ. Ներսէս Քիւփեւեան, Ստեփան Շահպազ, Նուպար Մազսուտեան, եւլն.:

Երիտասարդ Հայուհի-ն եղած է կնոջական միակ թերթը ամբողջ լիբանանահայ դաղութին մէջ: Պատիւ մըն է խմբագրապետուհիին համար, որ առանց մասնաւոր հատուածի մը օժանդակութիւնը վայելելու, իր անձին հմայքին եւ կամքին, ինչպէս նաեւ իր հանդուցեալ ամուսնոյն՝ Տոքթ. Ներսէս Քիւփեւեանի նիւթական եւ բարոյական քաջալերանքին շնորհիւ, շուրջ 22 տարի կրցաւ կանգուն պահել իր թերթը:

Թերթին խմբագրականները կը յայտնաբերեն ոճ եւ տեսակէտ

ունեցող զբաղիտուհին, իսկ իր քրոնիկները՝ հրապարակագրութեան տեղեակ անձը: Իր թերթին արտասահմանեան եւ տեղական լուրերը միայն պարզ տեղեկատուութիւն չեն, այլ՝ մեկնաբանութիւն, համեմուած երբեմն կծու խայթոցներով:

Տխուր է հաստատել որ Երիտասարդ Հայուհի-ի խմբադրական աշխատանքը ամլութեան առաջնորդեց պատմուածադէր Սիւրան Սեդան, որ իր յայտնութիւնը կատարած էր Հայրեմիք Ամսագիր-ի էջերուն մէջ:

Այսօր դադրած է կնշական թերթ Երիտասարդ Հայուհի-ն եւ լոյս կը տեսնէ Երիտասարդ Հայ. վերտառութեամբ՝ ուրիշ բովանդակութեամբ եւ առանձին խմբադրական կազմով:

Դ. ՏԱՍՆԱՄԵԱԿ (1951-1960)

Կիլիկիոյ կաթողիկոսութեան շուրջ կատարուած պայքարը հիմնական կարիքը կը կազմէ այս տառնալեւակիւ:

Գարեգին Կթղ.ի վախճանումը առաջին ազգանշանը կու տայ այդ բորբոքման: 1956 թ.ին Ջարեհ Կթղ.ի ընտրութիւնն ու օծումը իր դադաթնակէտին կը հասցնեն այդ պայքարը: Նախկին տասնամեակներէն կուտակուած քէնն ու վրէժխնդրութիւնը, որոնք նոր դըրդիւ մը ստացած էին կաթողիկոսական ընտրութեամբ, իրենց արինալի վախճանը կը դտնէին 1958 թ.ի լիբանանեան քաղաքացիական կռիւներու օրերուն, երբ լիբանահայութիւնն ալ կը մղուէր եղբայրասպան կռիւներու:

Այս տասնամեակի նոր հրատարակութիւններն են:

Այգ - քաղաքական եւ անտեսական օրաթերթ: Սկսած է լոյս տեսնել 1953 թ.ի Մարտի 7-ին եւ ցարդ կը հրատարակուի: Տէր եւ Տնօրէն Տիգրան Թոսպաթ, ապա՝ Տիկին Լիւսի Թոսպաթ: Սմբազիբներ՝ Երուանդ Կոպէլեան, Եղիա Նաճարեան, Մինաս Թէօլէօլեան, Նազարէթ Թոփալեան: Ներկայիս՝ Ծահանդուխտ Պերթիզլեան:

Եթէ հայ քաղաքական միւս օրաթերթերը հայ քաղաքական կուտակութեանց օժանդակութիւնը կը վայելեն, Այգ-ի պարագային դուտ անձնական նախաձեռնութիւն է. եւ եթէ կրցած է թերթը նիւթական դժուարութիւններու տակալ, ատիկա կը պարտի իր Տէր եւ Տնօրէն Տիգրան Թոսպաթի ուրիշ թերթ մը ունենալուն՝ Ֆրանսատար Le Soir-ը:

Ի՞նչ նպատակով լոյս տեսած է այս օրաթերթը: Տիգրան Թոսպաթ ունեցած է քսան տարուան լրագրական եւ քաղաքական գործունէութեան փորձառութիւն մը, զոր ուզած է ի սպաս դնել հայ

համայնքին: Կարելի է ըսել որ Տ. Թոսպաթ լիբանանահայ այն սահմանափակ դեմքերէն է, որոնք տեղացի տարրին հետ մօտէն կապ հաստատած եւ շաղախուած են, ու միաժամանակ չկորսնցնելով իրենց հայկականութիւնը, իրենց կարողութիւնները ի սպաս դրած են իրենց ժողովուրդին: Թերթը նպատակադրած է «հայկական կարծիքը առաջնորդել եւ զայն մղել աւելի մօտէն շահագրգռուելու՝ Լիբանանի զարգացման համար հական նկատուող հարցերով»:

Կարճակերպուած կուսակցութեան մը օրկանը չըլլալով՝ Այգ-ի տէրը դիւրաւ կրցած է քաղաքական դիրքորոշումներու փոփոխութիւններ արձանագրել:

Թերթը կը տառապի աշխատակիցներու պակասէն:

Նայիրի - սկսած է որպէս պարբերադիրք 1941 թ.ին Հայէպ: Ապա դարձած է զրական ամսաթերթ եւ լոյս տեսած մինչեւ 1949 թ.: 1951 թ.ին լոյս տեսած է Պէյրութ: 1952 թ.ին դարձած է զրական եւ ազգային շարաթաթերթ: Խմբագիր՝ Անդրանիկ Մառուկեան:

Ա. Մառուկեան ունի բառերը չծամծմելու եւ քննադատելու քաջութիւն: Հ. Յ. Դ. կուսակցութեան շարքերէն դուրս գալը աւելի սպաստութիւն տուած է իր այդ կարողութիւնները զարգացնելու: Ունի հաղորդական ոճ մը եւ անթերի հայերէն մը, որոնցմով սովորական նիւթերն իսկ շահեկան կը դարձնէ: Իր յաճախակի ճամբորդութիւնները առատ նիւթ կը հայթայթեն իրեն:

Անցեալին ունէր աշխատակիցներու փաղանդ մը: Ծարաթաթերթը թէեւ լոյս տեսած է ազգային եւ զրական ենթախորագրով, սակայն աւելի ազգային նիւթերն են որ տիրապետող եղած են: Վերջին տարիներուն՝ թերթը դարձած է յուշագրական հանդիսարան մը:

Բժիշկ - 1955 թ.ի Յուլիսէն սկսեալ: Խմբագրական մարմին՝ Տոբթորներ Վարուժան Սահակեան, Մեղրոն Էպլիզաթեան եւ Յարութիւն Գաղանճեան (զրական անունով Յ. Գեղարդ):

Որպէս բժշկական հրատարակութիւն՝ գաղութիս առաջին եւ միակ ձեռնարկը: Ի պատիւ հրատարակիչներուն՝ պէտք է յայտնել նաեւ իր ամսաթերթ կոչումը արդարացնող եւ իր ամսական ժամագրութիւնը յարող սակաւաթիւ հրատարակութիւններէն մէկն է:

Իր բովանդակութեամբ հանրամատչելի հրատարակութիւն մը, որ նպատակ ունի օգտակար հանդիսանալ մեր ժողովուրդին, սատարելով անոր առողջութեան՝ դիտութեան եւ բժշկութեան նորագոյն դիւտերու եւ վերջին փորձարկութիւններու լոյսին տակ:

1964 թ.էն ի վեր սկսած է լոյս տեսնել հովանաւորութեամբ Լիբանանահայ Բժշկական Միութեան:

Սփիւռֆ - դրական, գեղարուեստական եւ հասարակական շարաթաթերթ: 1958 թ.ի Ապրիլի 4 - Մայիսի 11: Ժամանակաւորապէս դադրած՝ լիբանանեան քաղաքացիական կռիւներու ընթացքին եւ վերհրատարակուած 1959 թ.ի Փետր.ի 14-էն սկսեալ:

Արտօնատէր եւ պատասխանատու տնօրէն, ապա դարձած խմբագրապետ՝ Սիմոն Սիմոնեան: Ա. խմբագրականին մէջ կը յայտնէ. «Սփիւռֆ շարաթաթերթը կը հրատարակենք, որովհետեւ առաջին՝ խորապէս կը զգանք, որ ընելիք մը ունինք: Երկրորդ՝ քրմական յափշտակութեամբ կը հաւատանք մեր ընելիքին: Երրորդ՝ մեր խորին հաւատքին համեմատութեամբ լեցուած ենք քաջութեամբ»: Թերթը ունեցաւ զանազան շրջաններուն տարբեր խմբագիրներ, կամ խմբագրական կազմեր, սակայն Սիմոնեանի ներկայութիւնը միշտ ալ զգալի մնաց: Ունենալով անձնական տպարան եւ որոշ անկախութիւն, Սիմոնեան կրցաւ հայրենի իրականութեան եւ մեր ազգային հարցերուն մօտենալ որոշ ազատութեամբ:

Սփիւռֆ-ը ամենէն առաջ ծառայեց իր խմբագրապետին, երբեմն նոյն թիւին մէջ մէկէ աւելի յօդուածներ հիւրընկալելով անկէ:

Սիմոնեան՝ Զօպանեանական խանդաղատանքով մը մօտեցաւ սկսնակ գրողներու, երբեմն առատօրէն գովաբանելով զանոնք: Նուիրեց անոնց առանձին թիւեր՝ Սփիւռֆ-Գարուն վերնագրով եւ անոնցմէ ոմանք բախտը ունեցան առանձին հատորով հրատարակ դալու:

Սիմոնեանի զրուցիւնները կը յայտնաբերեն անթերի հայերէն մը եւ մեր մատենագրութեան ու պատմութեան քաջատեղեակութիւն մը:

Սփիւռֆ-ի աշխատակցած են Գէորգ Աճէմեան, Նազարէթ Փաթանեան, Կարօ Արմէնեան, Սերոբ Երէցեան, Երուանդ Քասունի, Լեւոն Վարդան, Տոքթ. Յ. Սաղըրեան, Տոքթ. Գ. Քէշիշեան, Տոքթ. Յ. Կարեւորեան, Գրիգոր Քէօսէեան, Օննիկ Ինճէեան, Պարոյր Մասիկեան, Խորէն Տէտէեան, Նշան Խոչաֆեան, Երուանդ Պարսումեան, Գուտտի Միքայէլեան, Հուրի (Ժանէթ Քասունի), Ստեփան Շահապզ, Բիւզանդ Եղիայեան, Զարեհ Որբունի, Նշան Պէշիկթաշլեան, Բժ. Ս. Սաչատուրեան, Վեհանոյ Քէքեան, եւլն.: Առաջին տարիներուն խմբագրական աշխատանք կատարած են Ն. Փաթանեան, Կ. Արմէնեան, Ս. Երէցեան, Գ. Աճէմեան եւ Երուանդ Քասունի:

Ժողովածու Գրականութեան եւ Արուեստի (1950-1954 թթ.) խմբագիր՝ Պետրոս Մինասեան. Մշակոյթ (1954-1955 թթ.), Գիրք Գրականութեան եւ Արուեստի (1955-1959 թթ.), խմբագիր՝ Գառ-

նիկ Աղղարեան. Յառաջ, խմբադիր՝ Գեղամ Սեւան. էջեր Գրակա-
նութեան եւ Արուեստի, խմբադիր՝ Գառնիկ Աղղարեան. 1971 թ.ի
վերջերը՝ Արմէն Դարեան:

Սնունդներու այս փոփոխումը ի՞նչ նպատակով կատարուած է՝ մեղի համար կը մնայ անյայտ: Էականը՝ հայ համայնակար եւ յառաջդիմական գրողներու հանդիսարան մըն է, ուր արձագանգ կը տրուի խորհրդահայ, խորհրդային եւ ընդհանուր առմամբ համաշխարհային կոմունիստական գրականութեան եւ շարժման: Պէտք է ընդունիլ նաեւ որ արար գրականութիւնը, ի մասնաւորի արարական կոմունիստական գրականութիւնը, մեծաւ մասամբ վերոյիշեալ թերթերուն միջոցով է որ կը հրամցուի մեր հասարակութեան:

Եիրակ - Ամսադիր գրականութեան եւ արուեստի: Սկսած է 1956 թ.ի Ապրիլին: Հրատարակութիւն՝ Թէքէեան Մշակութային Միութեան: Խմբադիր՝ Զարեհ Մելքոնեան (1956-1964 թթ.), պատասխանատու խմբադիր՝ Օննիկ Սարգիսեան (1965-էն սկսեալ): Այս վերջնոյն օրով ունեցած է 7 հոգինոց խմբագրական մարմին մը - Լեւոն Վարդան, Զաւէն Մսրըլեան, Գրիգոր Քէօսէեան, Տոքթ. Գ. Քէչիշեան, Պ. Մատուռեան, Հ. Նազգաշեան եւ Ա. Սեփեթեան:

Եիրակ-ին աշխատակցած են՝ Ա. Նաճարեան, Վ. Մովեան, Վ. Պետիկեան, Լեւոն Վարդան, Զ. Որբունի, Բ. Նուրիկեան, Բ. Եղիայեան, Վահէ Հայկ, Ա. Տատրեան, Ա. Սեփեթեան, Գ. Աճեմեան, Հ. Պարիկեան, Ն. Ակիշեան, Տ. Վարժապետեան, Յ. Ե. Մազիստրոս, Զաւէն Վարդապետ, Երուանդ Քասունի, Մ. Մանուկեան, Գր. Քէօսէեան, Ստ. Շահպաղ, Հուրի (Ժանէթ Քասունի), Արեգ Տիրազան, Յ. Մաթեան, Պ. Քաջբերունի, Հայկ Նազգաշեան, եւլն.:

Հակառակ խմբագրական կազմի մը գոյութեան, Եիրակ կ'ապրի իր հոգեվարքը:

Ե. ՏԱՍՆԱՄԵԱԿ (1961-1970)

Այս տասնամեակը կը յատկանշուի մեր հատուածներուն միջեւ բարձրացած պատկէշներու քանդումով: Նախկին տասնամեակներու պայքարներուն տուն տուող պատճառները հետզհետէ գոյութեան իրաւունքէ կը դադրին:

Կարծէք մարդոց ջիղերն ալ յոգնած են եւ հանդիստի պէտք ունին: Սառցահալ մը կայ, որ ամէն մարդի մէջ կը զգացուի: Այս սառցահալին կը նպաստեն համաշխարհային թատերաբեմի վրայ շեփորուող խաղաղ դոյակցութեան քաղաքականութիւնը, երկու

կաթողիկոսներու սաղիմական ողջագուրումը, եկեղեցական տիկ-
զերական ժողովները, Ապրիլեան եղեռնի յիսնամեակի տօնակատա-
րութիւնը, ու մանաւանդ հայրենիքին թանճրացեալ ներկայութիւ-
նը մեր կեանքին մէջ՝ իր ուղարկած անսամայլներով, Ֆութպոլի
խումբերով, թատերական խումբով, զբաղման եւ զխտական պատ-
ւիրակութիւններով: Այս բոլորը առաւել կամ նուազ չափով կը
կախուղցնեն սիրտերը: Մամուլը՝ որ մեր կեանքին զարկերակը
զարձած է, ամենէն առաջ իր էջերուն մէջ կը ցոլացնէ վերոյիշեալ
դրդապատճառներով յառաջ եկած հոգեփոխութիւնը: Ճիշդ է որ
մեր հատուածները տակաւին կեցած են իրենց դերքերուն վրայ,
սակայն աղղային հրատապ հարցերու համար խորհրդակցութիւն-
ներ կամ մտքի փոխանակումներ կը կատարուին: Նոյն հատուած-
ներուն չպատկանող ղեկավար տարրերու ներկայութիւնը այդ
հատուածներէն մէկուն ձեռնարկին՝ այլեւս անսովոր երեւոյթ է:

Այս տասնամեակի գլխաւոր նոր հրատարակութիւններն են.

Բագին - ամսագիր գրականութեան եւ արուեստի: Սկսած է
1962 թ. Յունուարին: Ունի եօթը հոգինոց խմբագրական կազմ
մը: Վարիչ խմբագիր՝ Կ. Սասունի. խմբագիրներ՝ Եղ. Պօյաճեան
եւ Պ. Սնապեան: Խմբագրութեան անդամներ՝ Յ. Գեղարդ, Տ. Ոս-
կունի, Բ. Փափազեան եւ Վ. Օշական: Ինչո՞ւ այս հրատարակու-
թիւնը: Խմբագրութիւնը կը հաստատէ թէ երկու պատերազմնե-
րուն միջեւ՝ հայութեան արեւմտահայ հատուածը զբաղման երկու
փայլուն շրջան ստեղծեց՝ տալով մնայուն գործեր եւ գրողներու
կորովի փառանք մը: Վերջին տարիներուն ստեղծագործական
դանդաղութիւն մը ակներեւ է, որ «գրողներու ներքին կրակին պա-
կասով կամ իմացական ծուլութեան հետեւանքով չի բացատրուիր,
այլ պատճառ ունի կեդրոնական ու կեդրոնաձիգ բեմի մը բացա-
կայութիւնը, այսինքն՝ գրողները քով քովի բերելու, աշխատան-
քի մղելու, աշխատութիւնները արժանաւորապէս ներկայացնելու
խանդավառ միջոցը, որ վերջին տարիներուն պակսեցաւ մեզի:
«Բագին» կոչուած է այդ կեդրոնական ու խանդավառ բեմը ըլլա-
լու»:

Թերթը ունեցաւ անյապաղ հրատարակութիւն եւ մաքուր
տպագրութիւն: Ան ամենէն առաջ ծառայեց իր խմբագրական մարմ-
նին, որովհետեւ անոր անդամները արդէն կազմաւորուած գրողներ
էին եւ բեմի մը պահանջը ունէին, ուրկէ կարենային իրենց նե-
րաշխարհը արտայայտել:

Թերթը հետզհետէ առիթ տուաւ նորերու, որոնք իրենց կազ-
մաւորման շրջանին մէջ են:

Ահեկամ - (1966-1970 թթ.): Եռամսեայ: Պատասխանատու խմբագիր՝ Գրիգոր Շահինեան, ընկերակցութեամբ խմբագրական եւ վարչական կազմի մը: Ունեցաւ մաքուր տպագրութիւն եւ սկզբնակ գրողներու փաղանգ մը: Եղաւ գրական նորարարութիւններու բնմ մը:

Նիւթական ամուր կռուաններ չունենալով իր ետին՝ հինգ տարուան դոյութենէ մը ետք դադրեցաւ:

Երիտասարդ Հայ. - (1969 թ. Դեկտ.ի 29-էն սկսեալ): Երկ-շաբաթաթերթին խմբագրութեան աշխատանքին լծուած են խումբ մը երիտասարդներ, որոնք չունին գրական անցեալ, նաեւ խմբագրական փորձառութիւն ունեցող առաջնորդ մը: Թերթին մէջ կը գտնէք քիչ մը ամէն բան ե՛ւ միջադպիւն կեանքի, ե՛ւ ազգային կեանքի վերարբերեալ: Էջագրութիւնը դրութիւնը որդեգրուած է ամերիկեան շաբաթաթերթերու կերպէն:

Միակ թերթն է, ուր հաւասար անկողմնակալութեամբ կը խորանուին մեր ազգային դանազան թերիները: Զայն խմբագրողները ունին յանդուութիւնը չժամօմելու բառերը: Թերթին ամենէն շահեկան մասերը այն տեսակցութիւններն են, որոնք տեղի ունեցած են մեր ղեկավար տարրին հետ:

Թերթին ստուերոտ կողմը իր լեզուն է, ուր անհրաժեշտ բժանդրութիւնը չի տեսնուիր:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

1921-1971 թթ. յիսնամեակին Լիբանանի մէջ լոյս տեսած հայ մամուլին մեծ մասը լոյս ընծայուած է Պէյրութի մէջ: Եւ ասիկա կապ ունի Լիբանանի աշխարհագրութեան եւ Պէյրութի դրաւած դիրքին հետ: Լիբանանի միւս քաղաքները վաճառաշահ կեդրոններ չըլլալով՝ հայ դաղթականներուն համար չեն ունեցած քաղաղական ոյժ: Եթէ նոյնիսկ դաղթականական փոքրաթիւ խմբակներ տպատան գտած են այդ քաղաքներուն մէջ, կարճ ժամանակէն փոխադրուած են Պէյրութ: Մնացողներուն համար մշակութային եռուն դործունէութիւն մը անկարելի ըլլալով, չունենալով մտաւորական տեղական ոյժ, նաեւ զրկուած ըլլալով հայկական տպարաններէ, մամուլի ո՛չ մէկ աչքառու փորձ կատարուած է: Եղածները պատանեկան կամ աշակերտական փորձեր են, որոնք եղած են խմբաշատիպ, մեքենագիր, իսկ տպագիրները լոյս տեսած են Պէյրութի հայ տպարաններուն մէջ:

Պէյրութէն դուրս թերթեր լոյս տեսած են Ճիպէյլ, Նահր Իպրահիմ, Ճունի, Թրիփոլի եւ Այնճար:

Այս նոյն յիշմամեակին Լիբանանի մէջ լոյս տեսած Հայ մամուլին մեծ մասը իրեն կոուան ունեցած է Հաւաքականութեան մը օժանդակութիւնը, ըլլայ ատիկա կուսակցութիւն, բարեսիրական կամ մշակութային ընկերակցութիւն, կրօնական Համայնք, եւլն: Հաւաքականութիւններու նիւթական եւ բարոյական աջակցութիւնը անհրաժեշտ պատուանդանն է եղած, որուն վրայ բարձրացած է լիբանանահայ մամուլը: Նոյնիսկ անհատական նախաձեռնութեամբ լոյս ընծայուած եւ ընծայուող թերթերը, ուղղակի կամ անուղղակի քաջալիբանք դտած են հիմնադիրներուն կամ խմբագիրներուն պատկանած կուսակցութիւններուն կամ մշակութային կազմակերպութիւններուն կողմէ: Այսօր լոյս տեսնող լիբանանահայ մամուլին միայն երեքը անհատական նախաձեռնութեան կը պատկանին - Անդրանիկ Մառուկեանի Նայիրի-ն (այս թերթին սկզբնական յաջողութեան մէջ մեծ բաժին ունեցած է խմբագրին պատկանած կուսակցութիւնը), Տիգրան Թոսպաթի Այգ-ը եւ Սիմոն Սիմոնեանի Սփիւռք-ը:

Ուրախալի երեւոյթ է որ մեր օրաթերթերը, տարիներով այս ու այն տպարաններուն դռները ափ առնելէ ետք, այսօր մեզի կը ներկայանան իրենց սեփական տպարաններով, օժտուած տղաշարով եւ տպագրական մամուլով:

Նոյն ուրախութիւնը կարելի չէ արձանագրել անոնց տպարանակին Համար: Մեր չորս օրաթերթերուն Համագումար տպարանակը 15,000-ը չ'անցնիր (նոյնիսկ եթէ շատ առատաձեռնութեամբ մօտենանք այս հարցին):

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ

1) Եղեռնէն ճողոպրած սերունդին Համար, որուն զլացւեցաւ տարրական կրթութեան մը բարիքը, մամուլը եղաւ դպրոց մը, որ առօրեայ ընթերցանութեան նիւթ Հայթայթեց եւ իր բազմազան ու դիւրամատչելի նիւթերով, սատարեց ընդհանուր զարգացում մը ապահովելու:

2) Հայ մամուլը՝ Հայ եկեղեցւոյ եւ Հայ դպրոցին կողքին զլիսաւոր ազգայիններէն մէկն է, որ ազգապահպանման մեծ դեր կը կատարէ: Եթէ մեր անցեալի եւ ներկայի ծանօթութիւններու ստացումն է, այսինքն՝ հաղորդ ըլլալը անոնց, որ կը զօրացնէ Հաւաքական ուղին, այս պարագային՝ մամուլը, մանաւանդ օրաթերթն է որ իր ամէնօրեայ լրատուութեամբ մեզ հաղորդակից կը պահէ ե՛ւ մեր տեղական, ե՛ւ Հայրենական, ե՛ւ այլ դաղութիւններու հայկական անցողաբձերուն:

3) Լիբանանահայ մամուլը եղած է լիբանանահայ դրակա-նութեան քաւարանը: Հո՛ն է որ սկսնակ դրողները իրենց անհրա-ժեշտ մաքրարանը դառած են՝ սկսնակի իրենց խարխափումներէն հտք հեռո՛ղհեռէ կազմաւորուելու, եւ եթէ աստուածատուր քանքա-րի բաժինը բաւական զօրաւոր է եղած, դառնալու վաւերական դրապէսներ:

4) Լիբանանահայ գաղութի պատմութեան հանքն է լիբա-նանահայ մամուլը: Մեր մամուլը արձագանգած է մեր ազգային կեանքին եւ մշակութային իրադրժումներուն: Մեր գաղութին զանազան երևաներով դրաղելու պարտականութիւն վերցնող ներկայ եւ ապագայ ուսումնասիրողները անհրաժեշտօրէն ստիպուած պի-տի ըլլան պեղել այդ հանքը, իմա՛ հաւաքածոները, գտնելու հա-մար իրենց անհրաժեշտ տեղեկութիւնները:

ԹԵՐԻՆԵՐ

1) ԶԱՓԻ ՊԱԿԱՍ

Առօրեայ մամուլին մէջ լոյս տեսնող թղթակցութեանց եւ յայտարարութեանց մէջ չափի պակաս մը զգալի է: Աննախընթաց, անգուգակամ, միջազգային եւ այլ ածականներ ձրի կը բաշխուին որեւէ ձեռնարկի եւ անձի: Մամուլը պէտք չէ շփոթել շուկայի հետ, ուր փողահարուած ապրանքներուն տէրերը կրնան պատաս-խանատուութեան զգացում չունենալ: Բառերը, մա՛նաւանդ ածա-կանները, պէտք չէ պարպել իրենց իմաստներէն: Թերթի մը խմբադրութիւնը պէտք է գիտակցի գիրքի սրբաւթեան եւ մնայունու-թեան: Մինչ բեմերէ արձակուած խօսքերը փոքր հաւաքականու-թեան մը սեփականութիւնը կը դառնան եւ տարտամ հետք մը կը ձգեն մարդոց յիշողութեան մէջ, գիրը՝ իր աւելի լայն ընթերցա-նութեան եւ անջնջելիութեան շնորհիւ, մշտակայ օգտագործման եւ ուսումնասիրութեան աղբիւր է, ո՛չ միայն ներկայ, այլեւ ա-պագայ սերունդներուն համար: Ուրեմն՝ խուսափիլ ապագայ ու-սումնասիրողին յանձնելէ՝ մեր իրականութեան կամ մարդոց ար-ժէքներուն եւ արժանիքներուն մէկ ձեւափոխուած կամ խեղաթիւր-ւած պատկերը:

2) ԱՆՏԵՍՈՒՄ ԻՐԱՐՈՒ ՀԱԿԱԴԻՐ ԶԱԿԱՏՆԵՐՈՒ ԱՐԺԱՆԻՔՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՐԺԵՔՆԵՐՈՒՆ

Իւրաքանչիւր ճակատ, քաշուած իր պատեանին մէջ, ինք-նագոյութեան տենդէ մը մղուած կը փառաբանէ իր արժեմն ու

չարժեմը, սակայն լուռ կ'անցնի միւս ճակատներուն կամ հատ-
 ւածներուն իրազործումներուն, մարզական յաղթանակներուն,
 դրական ստեղծադրութիւններուն վրայէն, կամ ա'ռ առաւելն՝
 կը դռնանայ քանի մը տողի հաղորդումով, շատ յաճախ իրաւ ու
 անիրաւ քննադատական տողերով միախառնուած: Մինչ տարբեր
 պէտք է ըլլար մեղի պէս ճղակոտոր եղած ազգի մը պարագային,
 որուն անհրաժեշտ պահանջքը, հացին ու ջուրին չափ, միասնակա-
 նութիւնն է ու փոխադարձ յարգանքը: Մամուլը մեծ դեր կրնայ եւ
 պէտք է կատարէ այս ուղղութեամբ: Եւ ուրախալի երեւոյթ է որ
 ազրիլեան եղեռնի յիսնամեակի տօնակատարութենէն ետք այս
 ոգին սկսած է իր դոյուքիւնը զբալի դարձնել մեր մամուլին մէջ
 եւ բեմերուն վրայ:

3) ԵՐԳԻԾԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍ

Երգիծաթերթերու պակասը զբալի է լիբանանահայ կեան-
 քին մէջ: Անցեալին՝ փորձեր եղած են, ինչպէս Մկրտիչ Կապրաչի
 Հոս-հոսը, Բարզէն Գէորգեանի Փարոսը, Իշամեղուն, Երգիծա-
 զիրքը. սակայն երբեմն մէկ թիւէ ետք չիջած են, կամ առաւելա-
 գոյնը մէկ տարուան կեանք ունեցած են: Երգիծաթերթ չունենալէ
 դատ, չենք ունեցած նաեւ երգիծազիր: Արդէն երկուքին ալ դոյու-
 թիւնը փոխադարձաբար պայմանաւորուած է իրարմով: Երգիծա-
 թերթն է որ պիտի ստեղծէ երգիծազիրը, նաեւ երգիծազիրն է որ
 պիտի ստեղծէ երգիծաթերթը: Թուրիկն է (Միհրան Թուրիկեան)
 որ յարատեւօրէն երգիծաբանութեան ճաշակը հրամցուցած է Ազ-
 րակի ընթերցողներուն: Միհրան Տէր Ստեփանեանն ալ երգիծա-
 կան փորձեր կատարած է Զարթօնքի էջերուն մէջ՝ Պարսատիկէն
 ընդհանուր խորագրի տակ: Վերջերս Յովհաննէս Աղապաչեան եր-
 գիծանքի փորձ մը կատարեց իր Մեր Խմբագիրները գործով: Եր-
 գիծանքի պարագայական ակնարկներ կամ նշմարներ այս կամ այն
 թերթին մէջ անբաւարար են այդ պակասը լրացնելու համար:

Երգիծական գրականութեան ենթահոգի կամ նախանիւթի
 պակաս չունի Լիբանանը: Պէյրութը իր այսօրուան խառնիճաղանձով,
 ցուցամոլութեամբ, բարձրու աղճատումով եւ բազմազան տի-
 պարներով ահազին նիւթ կրնայ հայթայթել վաւերական երգիծա-
 րանին:

Եթէ չունինք երգիծաթերթ եւ ասպարէզով երգիծաբաններ,
 ուրախալի է որ ունինք երգիծանկարիչներ — Տիրան Աճէմեան եւ
 Մասիս Արարատեան: Տիրան Աճէմեան գրեթէ կէս դարու վաստա-
 կով մը կը ներկայանայ մեզի: Ո՛չ միայն լիբանանահայ Ազգակ եւ

Այգ, այլ նաեւ տեղական մամուլին բերած է իր աշխատակցութիւնը: Տխուր է հաստատել որ վերջին տասնամեակին՝ շատ քիչ անդամ կ'երեւի հայ մամուլին մէջ:

Մասիս Արարատեան, նախկին հալէպահայ, սակայն երկար տարիներէ ի վեր հաստատուած է Պէյրութ: Իր նախափորձերը Նայիրի շարաթաթերթին մէջ կատարելէ ետք, վերջին տարին Ագդակ օրաթերթի մնայուն աշխատակիցն է, ու ամէն օր իր սրամիտ երգիծանկարով ժպիտ կը բաշխէ թերթին ընթերցողներուն:

Երգիծանկարչութեան ոչմնայուն սպասարկու մըն է Գրիգոր Քէօսէեան, որ կ'աշխատակցի Երբակ ամսաթերթին եւ Զարթօնին:

4) ԼԵԶՈՒԱԿԱՆ ԲԾԱՆՆԴՐՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍ

Մամուլը՝ դպրոցին, տպարանին եւ կրթական մշակին կողքին՝ կը ներկայանայ որպէս լեզուական բժանիչըութեան պահակ: Սակայն, ցաւ ի սիրտ կը յայտնենք, որ ան, մանաւանդ առօրեայ մամուլը, կը թերանայ իր այդ պարտականութեան մէջ: Չենք մասնաւորեր մեր դիտողութիւնը, որովհետեւ բոլորն ալ, առաւել կամ նուազ չափով, նոյն մեղքէն կը տառապին: Թերթեր՝ լեզուական թերիներու մասին յօդուածներ լոյս կ'ընծայեն, սակայն տարօրինակ երեւոյթ, կարծէք ատոնք յատկացուած ըլլան ընթերցող հասարակութեան եւ կամ այլ թերթերու, ու խմբագիրները իրենք չեն օգտուիր այդ թերիներուն մատնանշումէն: Ոսքը կ'ողղկենք խմբագիրներուն, որովհետեւ թերթի մը մէջ լոյս տեսած յօդուածի մը լեզուական թերիներուն համար զանոնք պատասխանատու կը նկատենք:

5) ՏԱՐԵԿԱՆ ԱԿՆԱՐԿԻ ՊԱԿԱՍ

Մեր մամուլը կը թերանայ տարեկան տեսութեամբ չափելու մեր ժողովուրդին՝ զանազան մարդերու մէջ կատարած իրազործումները: Համապարփակ ակնարկներու մէջ պէտք է հասկաքաղը կատարել իրանանահայ ազգային, գրական, պատմաբանասիրական, թատերական, երաժշտական, նկարչական, եւլն. մարդերուն: Այս պարտականութիւնը ամենէն աւելի կը ծանրանայ ամսաթերթերուն վրայ: Պարագայական փորձեր կատարուած են, սակայն դրութիւնը հաստատուն աւանդութեան չէ վերածուած:

Կայ այլ անտեսում մը — անցնող տարուան ընթացքին լոյս տեսած հրատարակութեանց մատենագիտութիւնը: Մեր փնտածը

լոյս տեսած գիրքերուն մէկ պարզ ցուցակն է, այրուբնական դրութեամբ, առանց մեկնարանութեան: Մեկնարանութիւն սպասելը անհնարինը ակնկալել է՝ մեր պայմաններուն բերումով: Այս պարտականութիւնը կ'իյնայ հայագիտական հաստատութիւններուն ուսերուն:

Մեր ամսօրեայ մամուլէն կ'ակնկալենք նաեւ այլ պարտականութիւն մը — իրենց էջերուն մէջ հաստատել բաժին մը, ուր նշուին առօրեայ եւ ամսական մամուլին մէջ լոյս տեսած կարեւոր յօդուածները, անոնց բովանդակութեան մասին հակիրճ ակնարկով մը: Այս դրութիւնը ի պատուի էր Պոլսոյ մամուլին մէջ եւ շատ օգտակար դեր կրնայ կատարել: Որովհետեւ ամէն լրանանահայու նիւթական հասողութեան սահմանին մէջ չէ մեր կարեւոր թերթերուն բաժանորդագրուիլ եւ հետեւաբար տեղեակ ըլլալ անոնց մէջ լոյս տեսած կարեւոր յօդուածներուն:

6) ՏԱՐԵԳԻՐԳԻ ՊԱԿԱՍ

1929 թ.էն սկսեալ տարեգիրքի հրատարակութեան փորձեր եղած են, սակայն կարծէք այդ փորձը արմատ չէ կրցած արձակել: Ամենէն բախտաւորները քանի մը տարուան զոյատեւումէ ետք դադարած են: Միակը որ կրցած է երկարատեւ զոյութիւն մը ապահովել Կարօ Գէորգեանի Ամէնուն Տարեգիրք-ն է (1954-1968 թթ.), որուն ամենէն հետաքրքրական մասը հայկական գաղութներու պատմութեան յատկացուած բաժինն էր: Ներկայիս դադարած է անոր հրատարակութիւնը՝ խմբագրին տարիքին եւ անհանգստութեան պատճառով:

Ներկայիս տարեգիրքեր լոյս կ'ընծայուին, սակայն անոնց մեծ մասը դպրոցական ձեռնարկներ են:

Որպէս լուրջ տարեգիրք ներկայիս լոյս կը տեսնեն Դրագարկ-ն ու Հայկագետն Հայագիտական Հանդէս-ը, որոնք իրենց բովանդակութեամբ վեր են առօրեայ ընթերցողին հասողութենէն:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այս ուսումնասիրութիւնը, նկատի ունենալով իր ծաւալը, չէր կրնար անդրադառնալ լրանանահայ մամուլի բոլոր ներկայացուցիչներուն: 175-ի շուրջ հայ թերթեր լոյս տեսած են Լրանանի մէջ: Իւրաքանչիւրին առանձինն անդրադառնալու եւ դատումներ կատարելու համար, առանձին հատոր մը անհրաժեշտ էր լոյս ընծայել:

Մեր՝ առանձինն անդրադարձած մամուլին մասին տրուած տեղեկութիւններն ալ տակաւին ամբողջական չեն: Յիշատակած ենք զլիսաւոր խմբագիրները, առանց տալու անոնց խմբագրութեան տարիները: Չենք տուած աշխատակիցներու ամբողջական ցանկ մը, այլ դժնայած ենք կարելոր դրողներու անուններու յիշատակութեամբ, զազափար մը տուած ըլլալու համար թերթին որակին եւ կատարած դերին մասին:

Կ'ընդունինք որ անթերի դործ մը չէ մերը: Առաջին փորձն է լրանանահայ մամուլի յիսուն տարուան շրջանը ուսումնասիրութեան մը ենթարկելու: Եւ առաջին փորձերը մէ'շտ ալ ունեցած են իրենց անխուսափելի թերիները:

ԼԻՐԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

(1921 - 1971 թթ.)

- ԱԶԴԱԿ (օրաթերթ, 1927 Մարտ 5-ին սկսեալ):
- ԱԶԴԱԿ ՇԱՐԱԹՕՐԵԱԿ (1944 Մարտ 3 - 1952 Փետրուար):
- ԱԶԴԱԿ ՇԱՐԱԹՕՐԵԱԿ (1969 Նոյեմբեր 23-ին սկսեալ):
- ԱԶԴԱԿ ՄԱՐԶԱԿԱՆ (1952 Սեպտեմբեր 23 - 1958):
- ԱԶԴԱՐԱՐ (շաբաթաթերթ, 1942 Հոկտեմբեր 24 - 1952):
- ԱԶԴԱՐԱՐ (օրաթերթ, 1953 Սեպտեմբեր 1 - 1955):
- ԱԿՕՍ (1944 Ապրիլ - 1960 Դեկտեմբեր):
- ԱՀԵԿԱՆ (1966-ին սկսեալ):
- ԱՅԳ (ձեռագիր, ձումի, 1922-1923):
- ԱՅԳ (խմբատիպ, 1933):
- ԱՅԳ (օրաթերթ, 1953 Մարտ 2-ին սկսեալ):
- ԱՅՆՃԱՐ (1969):
- ԱՆԻ (1946-1955):
- ԱՆԻ (1965-ի Փետրուարին սկսեալ):
- ԱՆԻ (1969-ին սկսեալ):
- ԱՌԱԳԱՍՏ (1962, 1 թիւ):
- ԱՌԱԻՕՏ (1938-1946):
- ԱՍՏՂ (1924):
- ԱՐԱՐԱՏ (օրաթերթ, 1937 Նոյեմբեր 7-ին սկսեալ):
- ԱՐԱՐԱՏ ԳՐԱԿԱՆ (1956 Յունուար - 1963):
- ԱՐԱՐԱՏ ՄԱՐԶԱԿԱՆ (1956 Դեկտեմբեր 17 - 1958 Յուլիս 1):

ԱՐԵԻ (1953 Մայիս, 1 թիւ) :
 ԱՐՁԱԳԱՆԳ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԵՒ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆՑ
 (1968-էն սկսեալ) :

ԱՐՓԻ (1953 - 1954, 3 թիւ) : Յետոյ վերհրատարակուած :

ԱԻԵԼԻ ԿԵԱՆՔ (1959 Յունուար - 1961) :

ԱԻԵՏԱՐԵՐ (1949-1950, 4 թիւ) :

ԱԻԵՏԱՐԱՆԻԶ (1961 Յունիսէն սկսեալ) :

ԱԻԵՏԻՔ (1932 Մարտ 28-էն սկսեալ) :

ԲԱԳԻՆ (1962-ի Յունուարէն սկսեալ) :

ԲԺԻՇԿ (1955 Յուլիսէն սկսեալ) :

ԲԻԻՐԱԿԱՆ (1965 Յունուարէն սկսեալ) :

ԲՈՂԲՈՋ (1927, խմբատիպ) :

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ (1940-ական թուականներու) :

ԴԱՌՆԻ (1964 Յունուարէն սկսեալ) :

ԳԻՐՔ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ (1955 Դեկտ. - 1959) :

ԳԼԱԶՈՐ (1957-էն սկսեալ) :

ԳՐԱԿԱՆ ԿԱՅԾԵՐ (1956-1957) :

ԴԱՍՏԻԱՐԱԿ (1963 Յունուար - 1964 Ապրիլ) :

ԴՐԱԶԱՐԿ (1961 Սեպտ. - 1962) :

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅՈՒՀԻ (1932 Հոկտ. - 1934 Փետրուար) .

Նոր շրջան 1947 Յունիս - 1968) :

ԵՕԹԸ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ (անթուական) :

ԵՐԳԻԾԱԳԻՐՔ (անթուական, սակայն 1961-1962 թուականներու
 լոյս տեսած) :

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ (1969 Դեկտեմբեր 28-էն սկսեալ) :

ԶԱՆԳՈՒ (1954 Յունուար, 1 թիւ) :

ԶԱՐԹՕՆՔ (օրաթերթ, 1937 Սեպտեմբեր 26-էն սկսեալ) :

ԶԱՐԹՕՆՔ ՍՓՈՐ (1955 Փետրուար - 1957 Սեպտեմբեր) :

ԶԱԻԱՐԵԱՆ ՊՐԱԿ (1961-1962 Մայիս) : Յետոյ վերհրատարակուած :

ԷՋԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ (1965-էն սկսեալ) :

ԷՔՈՆՈՄԻԱ (1933) :

ԹԱՂԱՅԻՆ ՆՈՐ ԿԵԱՆՔ (1970) :

ԺՈՂՈՎԱԾՈՒ (1950-1954) :

ԺՈՂՈՎՈՒՐԴ (1932 Մարտ 3 - Յուլիս) :

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆ (շաբաթաթերթ, 1937-1939) :

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆ (օրաթերթ, 1942-1948) :

- ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆ (ամսաթերթ, 1943, 4-5 թիւ) :
 ԺՊԻՏ (1927) :
- ԻՇԱՄԵՂՈՒ (1958, 1 թիւ) :
- ԼԱՍՏ (1953, 2 թիւ) :
 ԼԻԲԱՆԱՆ (1924-1935) :
 ԼԻԼԱԿ (1929, խմբատիպ) :
 ԼՈՅՍ (աչազուրկներու, 1932 Յունուարէն սկսեալ) :
 ԼՐԱՏՈՒ (1938 Յունուար - 1944 Յուլիս) :
- ԽԱԶԲՈՒՌ (1962 Ապրիլ, 1 թիւ) :
 ԽԱՐՈՅԿ (խմբատիպ, 1924, 1 թիւ) :
 ԽՕՍՆԱԿ (1957 Սեպտեմբերէն սկսեալ) :
 ԽՕՍՆԱԿ ՊԱՏԱՆԵԿԱՆ (1969 Յունուարէն սկսեալ) :
- ՄԻԱԾԱՆ (1939 Յունիս - 1949) :
 ՄԻԼ (1947 Յունուար - 1948 Մարտ) :
- ԿԱՅԾ (1943 Մարտ - 1947 Դեկտեմբեր) :
 ԿԱՅԾ (1960 Մայիսէն սկսեալ) :
- ԿԱՆԹԵՂ (1960-էն սկսեալ) :
 ԿԱՆԶ (1971-էն սկսեալ) :
 ԿԱՐՄԻՐ ԱՐՇԱԼՈՅՍ (1931-1932, 4 թիւ) :
 ԿՐԹԱՍԻՐԱՑ (1925 Նոյեմբեր - 1927 Հոկտեմբեր) :
- ՀԱՅ ԱՅՆԹԷՊ (1963-էն սկսեալ, Պէյրութ) :
 ՀԱՅ ԳԻՐ (1939 Ապրիլ - 1944 Դեկտեմբեր) :
 ՀԱՅ ԿԵԱՆՔ (1925) :
 ՀԱՅ ՄԱՆՈՒԿ (1948 Յունուար - Մայիս, 5 թիւ) :
 ՀԱՅ ՊԱՏԱՆԻ (1933-1935, 15 թիւ) :
 ՀԱՅ ՊԱՏԱՆԻ (1952-1956) :
 ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ (1943) :
 ՀԱՍԿ (1932 Յունուարէն սկսեալ) :
 ՀԱՍԿԱՔԱՂ (1958 Մարտ, 1 թիւ) :
 ՀԱՐՈՒԱԾԱՅԻՆ (1954 Յունիս, 1 թիւ) :
 ՀՈՍ-ՀՈՍ (1928 Յուլիս 15 - Դեկտեմբեր 30) :
 ՀՈՐԻԶՈՆ (1935-1939) :
 ՀՈՒՆԶՔ (1960 Մարտ, 1 թիւ) :
- ՃԵՄ-ԱՐԻ (1937, քանի մը թիւ) :
 ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ (1962 Յունիսէն սկսեալ) :
 ՃՐԱԳ (1961 Յունուարէն սկսեալ) :

ՄԱՍԻՍ (1947 Յունուարին սկսեալ) :
 ՄԱՐԱՆԱԹԱ (1925-1964 Հալէպ, 1964-ին սկսեալ Պէյրուք) :
 ՄԱՐՏԱԿՈՉ (1934, 4 թիւ) :
 ՄԵՀԵԱՆ (1969 Մարտին սկսեալ) :
 ՄԵՐ ԿԵԱՆՔԸ (1950 Յունուար - 1954) :
 ՄՇԱԿ (1964 Նոյեմբեր - 1965) :
 ՄՇԱԿՈՅԹ (1954-1955 Օգոստոս) :
 ՄՈՒՍԱ ԼԵՌ (1962-ին սկսեալ) :

ՅԱՌԱՋ (1957-ին սկսած) :
 ՅԱՐԴԳՈՂ (1932 Յունուար, 1 թիւ) :
 ՅԵՂԱՓՈՅԱԿԱՆ ԱԼՊՈՄ (1949-1961, Հալէպ.
 1962-ին սկսեալ Պէյրուք) :

ՆԱԵԱՔԱՅԼ (1950-1951) :
 ՆԱՅԻՐԻ (ամսաթերթ, Հալէպ, 1941 Նոյ. - 1949. Պէյրուք, 1951) :
 ՆԱՅԻՐԻ (շաբաթաթերթ, 1952-ին սկսեալ) :
 ՆԱԻԱՍԱՐԴ (1962-ին սկսեալ) :
 ՆՈՐ ԱՇԽԱՐՀ (1951, 1 թիւ) :
 ՆՈՐ ԴԱՐ (խմբարտօնիկ, Նաիր Խարահիմ, 1 թիւ) :
 ՆՈՐ ԿԵԱՆՔ (1957-ին սկսեալ) :
 ՆՈՐ ՄԱՐԱՇ (1950, 2 թիւ) :
 ՆՈՐ ՈՒՂԻ (1945-1946) :
 ՆՈՐ ՍԻՆԵՄԱ (1959, 2 թիւ) :
 ՆՈՐ ՓԱՐՈՍ (1925, 2 թիւ) :
 ՆՈՐ ՓԻԻՆԻԿ (1925-1927) :
 ՆՈՒԻՐՈՒՄ (1952-ին սկսեալ) : Յետոյ դարձած տարեգիրք :

ՇԱՐԺՈՒՄ (1950 Ապրիլ, 1 թիւ) :
 ՇԻՐԱԶ (Այննար, 1965-1966) :
 ՇԻՐԱԿ (1956 Ապրիլին սկսեալ) :

ՈՎԱՍԻՍ (1925 Մարտ - 1926 Փետրուար, 12 թիւ) :
 ՈՎԱՍԻՍ (1964) :
 ՈՒՍԱՆՈՂ (1949-ին սկսեալ) :
 ՈՐԱՇԽԱՐՀԻ ԱՍՏՂԸ (1925 Մարտ - 1931 Նոյեմբեր) :

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ (1936 Դեկտեմբեր 1-ին սկսեալ) :
 ՊԱՏԳԱՄԱՐԵՐ (1956-ին սկսեալ) :
 ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱԳԻՐՔ (1930) :
 ՊԻՇԱԿ (1960, 2 թիւ) :
 ՊՐԻՍՄԱԿ (1951 Փետրուար - 1952 Դեկտեմբեր 27) :

- ԶԱՀԱԿԻՐ (1929 Յունուար – Յուլիս 15):
 ԶԱՀԱԿԻՐ (1951–էն սկսեալ):
 ԶԱՀԵՐԹ (1966 Ապրիլէն սկսեալ):
 ԶԱՆԱՍԷՐ (1937–ի աշունէն սկսեալ):
 ՌԱՀՎԻՐԱՅ (1960–ական թուականներուն):
 ՍԱՀԱԿ–ՄԵՍՐՈՊ (1927 Նոյեմբեր – 1931, 1933–1934):
 ՍԻՀՈՒՆ (1930 Յունուար – 1931 Յունիս):
 ՍԻՆԷ ԱՇԵԱՐՀԷՆ (1957 Յունուար, 1 թիւ):
 ՍԻՆԷ ՍԲՈՓ (1957, Ապրիլ):
 ՍԻՆԷ ՎԷՊ (1956, Հոկտեմբեր):
 ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ (ամբուսական, 1 թիւ): 1940–ական
 թուականներուն:
 ՍՊԱՐՏԱԿ (1940–41, 4 թիւ):
 ՍՓԻԻՌԻՔ (1958 Ապրիլ 4–էն սկսեալ):
 ՎԵՐԵԼԻՔ (1950, 2 թիւ):
 ՎԵՐԵԼԻՔ (1961 Մայիսէն սկսեալ):
 ՏԵՂԵԿԱՐԵՐ (1956):
 ՏՈՒՆ (1922 Սեպտեմբեր – 1924):
 ՅԱՅԳԱԼՈՅՍ (1951, 4 թիւ):
 ՅՈԼԻՔ (1967–էն սկսեալ):
 ՓԱՐՈՍ (1951):
 ՓԻԻՆԻԿ (1924–1925):
 ՓՈՐՁ (1947, 1 թիւ):
 PEC (1963–էն սկսեալ):
صدي الطلاب (1963–էն սկսեալ):
زارتونك (1958):
 2001 (1970 Ապրիլ – 1971):

Տ Ա Ր Ե Գ Ի Ր Ք Ե Ր

- ԱՄԷՆՈՒՆ ՆՈՐ ՏԱՐԵՑՈՅՑԸ (Ե. Տօլապեան, 1937–1940):
 ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ (Կարօ Գէորգեան, 1954–1968):
 ԱԼՊՈՍ–ՏԱՐԵԳԻՐՔ (Ազգ. Ռուբինեան վարժ.,
 1966–67–էն սկսեալ):
 ԱՐՓԻ (1964):
 ԴՐԱԶԱՐԿ (1967–1968, 2 թիւ):

- Լեւոն եւ ՍՈՖիա ՅԱԿՈՐԵԱՆ ԳՈՒԼԷՃԻ (1965-էն սկսեալ) :
 ԿենԱՅ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ (1960-1964) :
 ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԿ (1947-48, 1949, 1957) :
 ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ (1939-1940, 1951-1953) :
 ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ (1970) :
 Հ. Բ. Ը. Մ. Ի Լեւոն Կ. ՆԱԶԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ
 (1962-63-էն սկսեալ) :
 ՀՈՍ-ՀՈՍԻ (1929) :
 ՄԻԶՆԱԲԵՐԴ (1957, 1959) :
 ՇՆՈՐՀԱՅ ՅՕՂԵՐ (Ե. տարիք՝ Պէյրուս) :
 ՈՍԿԵԳԵՏԱԿ (1945, 1946, 1948) :
 ՈՒՍԱՆՈՂԱՅ (1936-1938) :
 ՍԻՓԱՆ (1964-էն սկսեալ) :
 ՍՈՒՐԻԱՀԱՅ (1929) :
 ՏԱՃԱՐ (1964-65, 1965-66) :

FIFTY YEARS OF ARMENIAN PRESS IN LEBANON (1921-1971)

ARDASHES DER KHATCHADOURIAN

This article tries to give a general view of the Armenian press in Lebanon from 1921-1971. During those 50 years more than 175 Armenian newspapers, periodicals and almanachs have been published, of which some have ceased publication. At the present some 60 Armenian newspapers, monthlies and almanachs are being published in Lebanon.

The history of the Armenian press in Lebanon is given in consecutive decades. In each decade we see the important problems which Armenians living in Lebanon have faced and the reactions of the press. The author names the leading newspapers and periodicals of that decade, giving some information about the duration, the program, the editors, the contributors, and making a brief appreciation of that press.

The writer puts a special emphasis on the achievements and defects of the Armenian press in Lebanon.

The article ends with a list where almost all the Armenian press in Lebanon are mentioned in an alphabetic order, giving also the periods of their duration.